361(43;91.542)
Մ-46

...ՉԵԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆ. ԸՆԿԵՐ. ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

IV N

7 MAR 2010

Wissenschaftliche Mitteilungen aus Bosnien und der Herzegowina

Wissenschaftliche Mitteilungen

Band 6 nebst Ergänzungsheft

Band 6

1901. XI 16. ~~Rechtsanw~~ Stephanow

Obschon.

361(43:91.542)
Ս-47

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՈԶԵԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

„Deutsche Hilfsbünde für Armenien"

(ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ)

1005
21947

Արտատպուած է «Մուրճ» ամսագրից

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Армянская Библиотека
7/XI-1922
Ա. ՄԱՍԻ ԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի || Типографія Т. М. Ротиніанца
Голов. пр., д. № 41.
1901

Дозволено Цензурою. Тифлисъ, 11 Января 1901 года.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ *)

«Deutsche Hilfsbünde für Armenien»

Յայտնի է, որ 1894—1896 թթ-ին Հայկական կոտորածներից յետոյ ամբողջ Եւրոպայում կազմակերպուեցան զանազան ընկերութիւններ, որոնք մինչև այսօր ամեն միջոցներով աշխատում են մեղմացնել կոտորածների այն սարսափելի տնտեսական հետևանքները, որոնք տիրում են այժմ Տաճկա-Հայաստանում։ Այդպիսի ընկերութիւններ ստեղծուեցան 1896 թուին նաև Գերմանիայում. վերջինը, Հայկական մարդասիրական գործում ինչպէս ծաւալի, այնպէս և օգնութեան ձևերի տեսակէտներից, եւրոպական ազգերի շարքում, անկասկած առաջի տեղերից մէկն է բռնում։

Բայց այն հանգամանքը, որ գերմանական այդ ընկերութիւնները գերմանական հոգևորականութեան ստեղծագործութիւն են և հոգևորականութեան միջոցով են ղեկավարւում, այլ և այն, որ գերմանացիք գուցէ ամենաեռանդուն կերպով են տարածում օժանդակութեան այդ գեղեցիկ գործը, կասկածանքների տեղիք տուին Հայ հասարակութեան մէջ դէպի այդ օգնութեան անկեղծութիւնը։ Ամեն տեղից սկսեցին ձայներ լսելի լինել, թէ գերմանական հոգևորականները իրենց գործում դաւանափոխական և մինչև անգամ քաղաքական նպատակների են հետևում։ Որքան գնում էր,

*) Արտատպած է »Մուրճ» ամսագրից 1899, № 12 և 1900, №№ 1, 2, 3, 4։

այնքան այդ կասկածները աւելի արմատանում և լայն ծաւալ էին ստանում, որովհետև նոյն գանգատները սկսան երևան գալ զանազան եւրոպական միչև անգամ... գերմանական թերթերում։ Վերջապէս, կասկածանքը հասաւ իւր գագաթնակէտին, երբ յայտնի եղաւ, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Օրմանեանը մի գրութիւն ուղարկեց մեծ վեզիրին, որի մէջ գանգատւում էր, թէ բողոքական և կաթոլիկ միսսիոնարները օգտւում են հայերի ներկայ աղետալի դրութիւնից, օգնութիւն անելով միայն այն պայմանով, որ նոքա փոխեն դաւանութիւնը։ «Kölnische Zeitung» (=Քէօլնիշէ Ցայտունդ) գերմանական լրագրին հէնց այդ էր հարկաւոր։ Նա արտատպեց Օրմանեանի այդ նամակը և իւր կողմից քննադատեց և պախարակեց գերմանական օգնութեան կոմիտէների գործունէութիւնը ինչպէս քաղաքական այնպէս և բարոյական տեսակէտից։ Այդ յօդւածի վերնագիրն էր «Դաւանափոխական գործունէութիւնը Հայաստանում»։ Համարեա թէ բոլոր գերմանական լրագրները թարգմանաբար արտատպեցին «K. Z.»-ից Օրմանեանի նամակը և լրագրի յաւելւածը, աւելացնելով իրենց կողմից, ոմանք գիտութեամբ, ոմանք անգիտութեամբ, նոյն նախատինքները հայկական կոմիտէներին։ (Բացառութիւն էին կազմում մի քանի առաջնակարգ և երկրորդական թերթեր, որոնց լաւ ծանօթ էր, ինչ նպատակներով են յարձակւում «Köln. Zeitung» և նորան համամիտ լրագրները Գերման-Հայկական կոմիտէների վրայ)։ Այսպիսով արդէն ամենքին և ի հարկէ մանաւանդ հայերի համար պարզ էր դարձել, որ ամբողջ այդ գերմանական օգնութեան գործը մի անբարոյական հիմնարկութիւն է, որի նպատակն է գերմանացնել հայերին և զրկել նոցա իրենց ազգային եկեղեցուց։ Հարկաւոր չէ շատ էլ խորասուզւել Գերմանիայի ներկայ տաճկական քաղաքականութեան մէջ, հասկանալու համար թէ ինչ պատճառով այդ «Հայրենազուրկ» հոգևորականները, ինչպէս նոցա անւանում եմ գերմանական

շովինիստները, վերջիններին այնքան անդուրեկան են։ Սոքա, քաղաքական և առևտրական շահերի ազդեցութեան տակ, բոլորովին զրկուել են բարոյական հասկացողութիւնից։ Ինչ վերաբերում է եւրոպական ուրիշ թերթերին, չըպէտք է մոռանալ, որ անգլիական և կաթոլիկ շրջանները հասկանալի պատճառներով նոյնպէս թշնամաբար են վերաբերվում այդ ընկերութիւններին։

Ի հարկէ, որպէս իրողութիւն կարող է և ճիշտ լինել, որ գերմանական պաստորները դաւանական նպատակների են հետևում Տաճկաստանում. մեր ասածը այն է, որ հիմնուել վերոյիշեալ աղբիւրների վրայ սխալ բան է։ Այն ժամանակ երբ ամենքը լաւած ուշադրութեամբ հետևում են յարձակողների կողմից բղխած տեղեկութիւններին, ոչ ոք չի փորձել նայել, թէ ինչ են անում, ինչ են ասում, ինչպէս են պատասխանում գերման-հայկական կոմիտէները։ Դոքա ամեն քայլափոխում պաշտպանում են իրենց գործը յանուն մարդկութեան և հայրենասիրութեան, և դոցանից կարելի է շատ բան իմանալ...

Առհասարակ գերմանացիների երևան գալը Տաճկաստանում չի կարող չըհետաքրքրել հայերին, մանաւանդ որ Բերլինի կառավարութեան քաղաքականութիւնը Կ. Պոլսում հակահայկական է, բայց չընայելով դրան, նա շատ օգտակար է տաճկահայերի ներկայ և ապագայ վիճակի համար. և պիտի ցանկանալ որ այդ գերմանական գործունէութիւնը երկար տևի։

Այն քաղաքականութեան մասին մենք արդէն առիթ ենք ունեցել մանրամասնաբար խօսելու ուրիշ տեղ *, և նոյնը այստեղ չենք կրկնելու։

Բայց հայոց հասարակութեանը չի կարող չըզբաղեցնել

---

*) Новое Обозрѣніе օրաթերթի 1899 տարեալ յուլիսի և օգոստոսի համարներում։

և բողոքական պատասխանների երևան գալը Հայաստանում։ Այդ երևոյթը կարող է հետաքրքրել մեկին աւելի կուլտուրական, միւսին քաղաքական, երրորդին դաւանական տեսակէտից։ Որոշ չափով ծանօթանալով Գերման-Հայկական ընկերութիւնների գործունէութեան հետ, ինչպէս նոցա պարբերական և ոչ-պարբերական հրատարակութիւնների միջոցով, այնպէս և այդ ընկերութիւնների մասին զանազան թերթերում տպած յօդուածների միջոցով, մեզ յաջողուեց հաւաքել մի նիւթ, որի նպատակն է, առաջինը—մի պատկեր տալ այդ ընկերութեան ծաճկաստանում, և երկրորդ—այս կամ այն տեսակէտից նպաստել «դաւանափոխական» հետաքրքիր հարցի պարզաբանութեանը։

Շատ լաւ ըմբռնելով վերջին հարցի լրջութիւնը, կ'աշխատենք, առանց որևէ կանխադատութեան, ամենայն անկողմնապահութեամբ առաջ բերել բոլոր աչքի ընկնող փաքտերը, թէ թեր և թէ դէմ։

1896 թ. լոյս տեսաւ Դոքտ. Իոհան Լեպսիուսի (Lepsius) «Armenien und Europa» (=Հայաստան և Եւրոպա) գիրքը։ Աշխատելով ճիշդ տեղեկութիւններ տալ հայերի կոտորածների մասին ծաճկաստանում, հեղինակը դիմում է Եւրոպային և մասնաւորապէս Գերմանիայի հասարակութեան, յոդոր տալով ուշադրութիւն դարձնել այդ ահռելի իրողութեան վրայ և ըստ կարելոյն միջամտել։

Այդ գիրքը Գերմանիայի հասարակութեան համար մեծ նշանակութիւն ունեցաւ։ Հայկական կոտորածների հետաքննութիւնները անուում էին անգլիացիների միջոցով. իսկ դէպի ամեն մի անգլիական տեղեկութիւն, այդպիսի դէպքերում, Եւրոպայում և մանաւանդ Գերմանիայում վերաբերուում են բաւականին մեծ կասկածանքով։ «Անգլիական ինտրիգ» դարձել է բոլորովին սովորական խօսք։ Բայց այնուամենայնիւ, այն ժամանակ Գերմանիայում ամենքը հաւատում էին, որ ինչ-որ սարսափելի բան է պատահում ծաճ-

կաստանում։ Հայերը կոտորուում են... Իսկ որքան, ինչու և ովքեր են կոտորում,—այդ պարզ չէր։

Դր. Իոհան Լեպսիուս, Բերլինի պատասխանատու, վճռեց այդ ժամանակ (1896 թ.) գնալ Տաճկա-Հայաստան, կամենալով անձամբ համոզուել, ճիշտ են արդեօք այն սարսափելի լուրերը, որ գալիս էին այդ, այն ժամանակ, դժոխային երևակայած երկրից։ «Armenien und Europa» այդ ճանապարհորդութեան հետևանքը եղաւ։ Նա արտատպուեց «Reichsbote» (=Պետական Համբաւաբեր) լրագրից։ Այդ միջոցով սատանալով կոտորածների մասին տեղեկութիւններ «սեփական» աղբիւրներից, գերմանական հասարակութիւնը դադարեց թերահաւատութեամբ վերաբերուել դէպի կոտորածների մասին լուրերը. լրագիրները, զանազան հրապարակախօսներ և մանաւանդ հոգևորականները շարժուեցին իրենց նախկին անտարբերութիւնից. վերջինները սկսան եկեղեցիներում ճառեր կարդալ թրքահայերի վերաբերեալ, դրամ հաւաքել, ժողովներ կայացնել, ուր մինչև անգամ կազմուում էին ուղերձներ և հեռագիրներ Գերմանական կայսրին, կոչումներ դէպի գերմանական ժողովուրդը և այլն։ (Հետաքրքիր է, որ ոչ մի կուսակցութիւն այնպէս խայտառակ կերպով չըվերաբերուեց դէպի կոտորուողները ինչպէս սոցիալ-դեմոկրատները, այսինք նոքա, որոնք ամենից շատ են գոռում ճշմարտու. և արդարութեան մասին)։

Այդ մարդասիրական շարժումի ամենանշանաւոր հետևանքը եղաւ կազմակերպուած օգնութիւնը հայ սովեալներին և հայ որբերին։ Այդ գործի նախաձեռնութիւնը պատկանում է Դր. Իոհան Լեպսիուս'ին և պատասխանատու Էրնստ Լոհման'ին (Lohmann)։

Արտաքին կազմակերպութիւնը, միջոցները և գործը ժողովրդականացնելու ձևերը։ Սկզբից, համարեա թէ միաժամանակ, Գերմանիայում կազմուեցան «օգնութեան» վեց թէ եօթ առանձին ընկերութիւններ։ Սոքա, ժամանակի ըն-

թացքում, միացան և յառաջ բերին երկու մեծ ընկերութիւններ, որոնց կենդրոնները դարձան (և այժմ են) Բերլինը և Ֆրանկֆուրտը (Մայնի վրայ)։ Բերլինը ղեկավարում է Գերմանիայի արևելեան-հիւսիսային մասնաճիւղ-ընկերութիւնները, իսկ Ֆրանկֆուրտը—հարաւ-արևմտեան։ Վերջինները աւելի ապակենտրոնացած են, քան առաջինները։ Կենտրոնական ընկերութիւնների, այսինքն այդ երկու մեծ ընկերութիւնների անունները մի քանի ամգամ փոփոխումների են ենթարկուել։ Այժմ Բերլինինը կոչւում է Deutsher Hilfsbund für Armenien («=Գերմանական Օգնութեան ընկերութիւն Հայաստանի համար»), կսկ Ֆրանկֆուտինը—Der deutsche Htltsbund für christlihes Liebeswerk im Orient» («=Գերմանական օգնութեան ընկերութիւն քրիստոնէական սիրոյ գործի համար Արևելքում»[1])։ Մտադրութիւն կար այդ երկու կենտրոնները, կամ կենտրոնական կոմիտէները, ինչպէս և կոչւում են նոքա, միացնել մի ընդհանուր կենտրոնով, բայց մի ժողովի մէջ (Բարմէն'ում, 18 հոկտեմբ. 1894 [2]), Ֆրանկֆուրտի կոմիտէի վարչութիւնը ընդդիմադրեց այդ ծրագրի իրագործմանը այն հիման վրայ, որ, նոցա կարծիքով, այդպիսի կենտրոնացումը կարող է ոչընչացնել ճիւղ-ընկերութիւնների ազդեցութիւնը գործի վրայ և թուլացնել նոցա գործունէութիւնը։ (Նկատուած է, որ ապակենտրոնական սիստեմով դրամ աւելի շատ է հաւաքւում)։ Յիշեալ վարչութիւնը ցանկանում է իւր կողմից, որ Բերլինի և Ֆրանկֆուրտի կենտրոնների վարիչները տարին մի անգամ գումարւեն մի տեղ ընդհանուր գործի մասին վճիռներ կայացնելու համար։

---

[1]) Տես «Mittheilungen aus d. Orient» 1898 № 2, էջ 9։

[2]) Հասարակութեան մէջ այդ երկու ընկերութիւնները ընդունւում են որպէս մի կազմակերպութիւն, և ունին մի ընդհանուր անուն, «Deutscher Hilfsbund für Armenien»։ (=Գերմանական օգնութեան միութիւն Հայաստանի համար)։

Այդ երկու կոմիտէները բաղկացած են բազմաթիւ ճիւղ-ընկերութիւններից (Zweig-Komites), որոնք ցրուած են ամբողջ Գերմանիայում. իսկ այն տեղերում, ուր այդպիսի մասնաճիւղեր գոյութիւն չունին, կան մասնաւոր անձեր, որոնք կոմիտէների ներկայացուցիչներ են համարւում։ Օրինակ, «Aus der Arbeit»[3]) 1898 թ. փետրուարի համարի մէջ[4]), կարդում ենք այդպիսի ներկայացուցիչների — մի շարք կանանց բարձր դասակարգից — անունները։

Դրամական միջոցները հաւաքւում են այս կերպ.

1. «Հայկական օգնութեան» գործում մասնակցող քահանաները (=պաստորներ) եկեղեցիներում հայերի վերաբերեալ քարոզ կարդալով, առաջարկում են ժողովրդին դրամական օգնութիւն տալ նոցա։

2. Ինչպէս կենտրոնական կոմիտէները, այնպէս և ընկերութիւնները ժամանակ առ ժամանակ ժողովներ են կայացնում, որոնց նպատակը երկու տեսակ է լինում. ժողովրդականացնել «Հայոց օգնութեան գործը», (կարդացւում են Հայաստանի և հայերի ներկայ դրութեան մասին դասախօսութիւններ), և՛ փող հաւաքել։ Այստեղ բաժանում են ունկնդիրներին թռուցիկ և պարբերական թերթեր հայերի մասին, իրենց գործունէութեան մասին զեկուցումներ. դոքա բոլորն էլ «գերման-հայկական կոմիտէների» հրատարակութիւններ են։

3. Այդ հրատարակութիւնների և ուրիշ լրագիրների միջոցով յայտարարւում են հասարակութեան, կենտրոնների,

---

[3]) Լիակատար անուն է Aus der Arbeit des armenischen Hilfswerkes=«Հայկական օգնութեան գործի աշխատութիւնից». այդպէս է վերնագիրը «Քրիստոնէական աշխատ» թերթի լաւագոյն, որ լոյս է տեսնում ամիս մի անգամ. այդ մասին տես յօդուածի շարունակութեան մէջ։

[4]) Նոյն տեղ, էջ 32.։

ընկերութիւնների և մասնաւոր անձերի հասցէները, որոնցով ցանկացողները կարող են հայերի օգտին ուղարկել գրամ, շորեղէն, պարգևներ, գրքեր որբերի համար և այլն։

4. Ժողովրդի մէջ տարածւում են երկու տեսակ տեսրներ գրամ հաւաքելու համար (Sammelbücher) A. (Ա.) B. (Բ)։ Առաջին տեսակի մի տետրի բոլոր ժողովարարութիւնները մի որբի օգտին, իսկ երկրորդի մէջ—ի նպաստ առհասարակ հայկական օգնութեան գործի։ Տետրների մէջ կարելի է գրւել 1 ֆէնիգից (=մօտ $^1/_2$ կոպէկից) սկսած։

5. Մասնաւորապէս այդ գործի համար, Ֆրանկֆուրտի կենտրոնը (որը առհասարակ առանձին եռանդով է գործում), պատրաստում է փոքր և մեծ գանձանակներ, որոնց վրայ գրած է «Հայաստանի համար»։ Սոքա ձրի բաժանւում են ժողովրդի մէջ։ Մի թուղթի թերթի մէջ վարչութիւնը խնդրում է գերմանական քահանաներից, որ նոքա պահանջեն նարանից այդ գանձանակները և կախ անեն եկեղեցիների դռան առջև։ Իսկ դիմելով հասարակութեան՝ վարչութիւնը ասում է. «Ինչպէս պէտք է անել, որ օգնեն որբերին և սովեալներին Հայաստանում։ Վերցրէք գանձանակը, ամեն ճաշից կամ ընթրիքից առաջ գցէք նրա մէջ 5 ֆէնիգ (=2) կոպ.), և երբ գալիս է ձեզ մօտ մի բարեկամ, կամ ծանօթ, խնդրէք, որ նոյնը անէ և նա»[5]։

6. Հայերի օգտին կազմում են վիճակախաղեր[6]։

7. Գերմանական կոմիտէները առաջին օրից սկսած ձրգտում էին հայերին, սոցա քայքայւած հայրենիքում, աշխա-

---

[5]) Այս գդղեցիկ խօսքերը տպւած են և «Mittheilungeu aus dem Orient» թերթի ծածկի վրայ։

[6]) Անցեալ հոկտեմբեր ամսին այդպիսի վիճակախաղ պիտի կայանար Բերլինում։ Մենք շատ զարմացած էինք տեսնելով, ինչպէս յաչեալ քաղաքում մի հասարակութեան մէջ պրուսական մի սպայի մայրը ծախում էր վիճակախաղի տոմսեր, որոնց վրայ գրած էր «Հայաստանի համար»։

տութեան միջոցներ ընձեռնել, որպէս զի գրամ բաժանելով, չսովորեցնեն նոցա ծուլանալու և ողորմութիւն խնդրելու։ Իսկ Լեսլիուսին յաջողեց մինչև անգամ մեծ արհեստանոց կառուցանել Ուրֆայում։ Ցղամարդիկ և կանայք ստանում նիւթեր և գործիքներ և կատարում են հիանալի աշխատութիւններ. խալիներ, կարպետներ և զանազան արևելեան ճաշակով ասեղնագործութիւններ։ Սոքա բերում են Եւրոպա և մի քանի քաղաքներում վաճառում։ Ստացած դրամը նորից դնում է որբանոցների օգտին։

Արդէն 1897 թուականին հայկական ստեղծագործուդիւնները և այլն ուղարկուում էին Գերմանիա, Աւստրիա, Ռուսաստան, Շուեցիա, Զուիցերիա և ուրիշ երկիրներ. այդ առարկաներից մի քանի քաղաքներում կազմուում են եղել ցուցահանդէսներ։ «Այդպիսի ցուցահանդէսներ կայացել են արդէն Ֆրանկֆուրտ՝ նորին գերազանցութեան Տիկին Ֆոն Շտիւլպնագէլի սալոններում, Հանաու (Մայնի վրայ)՝ թագաւորական Գեղարուեստից ճեմարանի դահլիճում, ճեմարանի պրոֆէսորների և վարժուհիների սիրալիր մասնակցութեամբ, Դեսսաու քաղաքում՝ աւետարանական ընկերութեան դահլիճում, ուր Նոցին Բարձրութիւններ դքսուհին, գահաժառանգը, արքայազն Էդուարդը և ամուսինը այցելեցին ցուցահանդէսը և շատ բան գնեցին. Դարմշտատ քաղաքում և այլն»[7]։ Այս նկարագրութեան վերջում, վարչութիւնը դիմում է ընթերցողին, հարցնելով. «չէ՞ք կարող արդեօք դուք ևս ձեր երկրում մեզ օգնել». նա խնդրում է պահանջել իրենցից հայկական ասեղնագործութիւնների ցուցակը։ «Դորա հետ, խնդրում ենք, գնացէք ձեր բնակչութեան տեղի մի պատուելի վաճառականի մօտ և խնդրեցէք, որ նա այս մարդասիրական գործի համար վերցնի իւր վրայ հայկական ա-

---

[7]) Unsere Waisenhäuser im Orient» (—Մեր որբանոցները Արևելքում 1 ապրիլ—1 հոկտեմբեր 1897, էջ 54.»

սեղնագործութիւնների պահեստը և վաճառումը. այսպիսի խնդիրքի վրայ մինչև այժմ մերժումներ մենք դեռ ևս չենք ստացել». [8]։

8. Զանազան քաղաքներում գոյութիւն ունին կանանց «Կարի ընկերութիւններ Հայաստանի համար» (Nähvereine für Armenien [9])։

Այդպիսի ընկերութիւնների անդամները հաւաքւում են միասին որոշ օրերը և շորեր են կարում հայ որբերի համար, նոցանից մէկը կարի ժամանակ կարդում է Հայաստանի մասին, նորա անցեալից, ներկայ դրութեան մասին, վերջին տեղեկութիւնները Տաճկա-Հայաստանից և այլն։

9. Կարելի է յիշել և այն, որ վաճառականներից շատերը որբանոցներին ձրի ուղարկել են շորեր, կօշիկներ, սարգևներ, իրեր, գրքեր և այլն։

Շահեկան են և «Հայկական օգնութեան գործի» ժողովրդականացնելու միջոցները։ Այս միջոցները կարելի է բաժանել երեքի.

1. Գրական հրատարակութիւններ, 2. ժողովներ և դասախօսութիւններ, 3. մի շարք ուրիշ սրամիտ միջոցներ։

1. Դեռ ևս տպւում էր «Armenien und Europa» Լեպսիուսի հռչակաւոր գիրքը «Reichsbote» գերմանական թերթի մէջ և դեռ լոյս չէր տեսել որպէս գիրք, երբ Ֆրանկֆուրտի երիտասարդ պաստոր Էրնստ Լոհմանը, սարսափած լինելով Լեպսիուսի նկարագրութիւնից, ինչպէս ինքը մի անգամ պատմում էր մեզ, շտապեց հրատարակել [10] իւր առաջին թռուցիկ թերթը «Gedenket Armeniens» («Յիշեցէք Հայաստանը») վերնագրով. տասնեակ հազարներով նա ցրուեց

---

[8]) Նոյն տեղ։

[9]) Բերլինում եմէ չենք ոխալւում, այդպիսին կազմել է տիկին Ռոռբախը

[10]) 1896 թ. Օգոստոսի ամսին էր։

այդ թերթը Գերմանիայում։ Ցոյց տալով հայ սովեալների և որբերի սհռելի թիւը, նկարագրելով նոցա դրութիւնը՝ Լոհմանը խնդրում էր գերմանական հասարակութիւնից գոնէ դրամով օգնել տառապեալներին։ Անցաւ հազիւ մի ամիս, և յարգելի քահանան սկսեց հրատարակել արդէն մի պարբերական ամենօրեայ թերթ, որը զբաղւում էր բացառապէս հայերով։ Այդ թերթը, «Auf der Warte» (=«Դիտարանի վրայ») անունով, հրատարակւեց մօտաւորապէս մի տարի։ Auf der Warte-ի փոխարէն երևան եկաւ 1898 թ. հոկտեմբերին «Mittheilungen aus dem Orient, von dem deutschen Hilfsbund für das christliche Liebeswerk im Orient» (=Հաղորդագրութիւններ Արևելքից, գերմանական օգնութեան միութիւնից քրիստոնէական սիրոյ գործի համար)։ Այս ամսաթերթը որի իւրաքանչիւր համարը բաղկացած է 10—14 էջից, գոյութիւն ունի ցայսօր։ Այդ թերթը բացառապէս հայկական օգնութեան գործին է ծառայում։ Նա Ֆրանկֆուրտի կենտրոնի օրգանն է։ Ինչ վերաբերում է Բերլինի կենտրոնին, սա էլ ունի իւր օրգանը—Aus der Aerbeit des armenischen Hilfswerks («Հայկական օգնութեան գործի աշխատանքից»), որը հրատարակւում է որպէս յաւելուած միւս ամսաթերթի—Das Reich Christi (=«Քրիստոսի թագաւորութիւն», որը ընդհանուր կրօնական թերթ է, և ոչ մի կապ չունի հայկական գործի հետ)։ Թերթի և յաւելուածի հրատարակիչն է Դր. Իոհան Լեպսիուսը, Բերլինի կենտրոնի վարիչը։

«Das Reich Christi»-ից և սորա յաւելուածից առաջ նոյն Լեպսիուսը հրատարակում էր, «Der christliche Orient» (=Քրիստոնէական արևելք) ամսաթերթը, որ 1897 թ-ից սկսած 12 համարով լոյս տեսաւ մինչև 1898 թ. յունուարը։ Այս ամսաթերթը նոյնպէս բառառապէս հայկական գործերով էր զբաղւում։

Այսպէս ուրեմն հայկական կոտորածները Ճաճկաստա-

նում պատճառ եղան 4 գերմանական պարբերական թերթերի երևան գալուն, որոնք յատկապէս սովեալների, որբերի, և առհասարակ բոլոր տառճկահայերի ներկայ և ապագայ դրութեան հարցով էին զբաղւում. նոցանից երկուսը զբաղւում են մինչև այժմ։ Այս հրատարակութիւնների մէջ գտնում ենք շահեկան նկարագրութիւններ որբանոցների կեանքի, երեխայոց զբաղմունքի մասին, տխուր տեղեկութիւններ սովեալների մասին, «Օգնութեան գործի» հաշիւներ, բացատրութիւններ իւր գործունէութեան նպատակների և միջոցների մասին. այստեղ կարդում ենք մանրամասն քրոնիկոն այդ գործունէութիւնից, քաղուածքներ գերմանական թերթերի բանակուից հայերի վերաբերեալ, փոքր յօդուածներ հայերի, նոցա պատմութեան, եկեղեցու և ընդհանուր դրութեան մասին. այս թերթերը լի են վերին աստիճանի հետաքրքրական պատկերներով որբանոցների կեանքից և այլն։

Բացի այս պարբերական թերթերից, ժամանակ առ ժամանակ, հարկաւոր դէպքերում, կենտրոնները ինչպէս և մասնաճիւղ- ընկերութիւնները հրատարակում և տարածում են թռուցիկ թերթեր։ Շահեկան է դոցանից մէկը, որը լայնի պատոր Նաումանի հայերի մասին արտայայտած կարծիքի առիթով լոյս տեսաւ. ամբողջ թերթը լի է պախարակումներով, որ մի գերմանացի (Նաուման), այն էլ պատոր, կարողացել է այդպիսի անբարոյական միտք արտայայտել։ այս թերթիկի մասին կը խօսենք յետոյ աւելի մանրամասնօրէն։

Ֆրանկֆուրտի կոմիտէն հրատարակել է նոյնպէս մի գեղեցիկ ալբոմ (գինը 1 ռուբլի) գոյնաւոր պատկերներով, արևելեան կեանքի և գերման ընկերութիւնների գործունէութեան նկարագրութիւններով։ Վերը, խօսելով դրամ հաւաքելու միջոցների մասին, ասացինք, որ ինչպէս կենտրոնական կոմիտէները, այնպէս և ընկերութիւնները կազմում

են «Հայկական» ժողովներ. այս ժողովներում տալիս են ունկնդիրներին նոյնպէս զանազան տեղեկութիւններ հայերի անցեալից և ներկայից. տեղացնենք, որ «Հայկական օգնութեան» գործիչները յաճախ օգտւում են դէպքից ուրիշ ժողովներում, որոնք ըստ ծրագրի ոչ մի կապ չեն ունենում հայութեան հետ, մի քանի խօսքով նոյնպէս ծանօթացնելու ժողովը հայերի դրութեան և գերմանացիների գործունէութեան մասին: Բացի այդ, Ֆրանկֆուրտի կոմիտէն մի յատուկ բարութեամբ ծանուցանում է որ «նոցա համար, որոնք կամենում են որ և է տօնի առիթով, կամ որ և է ժողովում, կամ մի ուրիշ տեղ Հայաստանի մասին դասախօսութիւն կարդալ, նա ուրախութեամբ պատրաստ է նիւթեր տալու»:

3 Հայկական օգնութեան գործի ժողովրդականացման մասնաւոր միջոցներից կարող ենք անուանել հետևեալները. ստուերային պատկերներ ընկերութիւնների գործունէութիւնից Ճաճկա-Հայաստանում, փոքր և մեծ գանձանակներ, տասը տեսակի բաց նամակները, որոնց վրայ կան գունաւոր և ոչ գունաւորված պատկերներ հայկական կեանքից, որբանոցների գործունէութիւնից, հայկական զարգերից. նոցա մի քանիսի վրայ տպված են գեղեցիկ գերմանական ոտանաւորները հրաւէրով օգնել հայերին. նամակի թղթեր, ծրարներ, շնորհաւորութեան և ողջոյնի քարտեր նոյն պատկերներով և այլն: Սոքա բոլորը ծախւում են շատ էժան գնով: Վերջապէս յիշենք պատի մի մեծ օրացոյց (Բերլինի կոմիտէի հրատարակութիւն). օրացոյցը բաղկացած է մի երեսից, մի մեծ տպագրական թերթի մեծութեամբ. նորա գլխին մեծ տառերով գրված. «Deutscher Hilfsbund für Armenien», (=Գերմանական օգնութեան միութիւն Հայաստանի համար). և վերնագրի մի կողմը Վեհափառ Կաթողիկոս Մկրտիչի, միւս կողմը պատկերներ Ուրֆայում սպանված հայ բողոքական պաստորի (!). մէջ տեղը Փոքր-Ասիայի

և Տաճկա-Հայաստանի քարտէզը [11]), իսկ շուրջը՝ պատկերներ որբանոցների կեանքից, տեղեկութիւններ «Hilfsbund»-ի (=Օգնութեան միութեան) գործունէութիւնից, և այլն։

Հաւաքած դրամի գործադրութիւնը: Սկսբից, երբ դեռ որբանոցները կառուցած չէին, տաճկահայերի համար, բոլոր հաւաքած գումարը գործածւում էր անմիջական օգնութեան վրայ, այսինքն սովի գաւառներում հայերին բաժանում էին հաց, սերմացու, շորեղէն, դրամ և այլն։ Հետըզհետէ, երբ որբանոցները սկսան սարքւել, դրամների մի մասը կարգադրեցին մսխել այդ հիմնարկութիւնների վրայ, և որքան սոցա գործունէութիւնը աճում էր, այնքան նոցա վրայ ծախսւած գումարը աւելի մեծ էր դառնում, համեմատած անմիջական օգնութեան համար ծախսւած գումարի հետ։ Հիմա նոյնպէս դեռ ահագին գումարներ են ծախսում անմիջական օգնութեան վրայ [12]), բայց աւելին գնում է արդէն որբերի օգտին [13]), թէպէտ և պէտք է նկատել այստեղ, որ գումար նուիրողին վերապահւում է իրաւունք, որոշել ինչ նպատակին պիտի ծառայէ նորա գումարը. օրինակ, Ֆրանկֆուրտի կամ Բերլինի կենտրոնների օրգաններում, նուիրողների ցուցակում կարելի է կարդալ այսքան դրամ—հայ որբերին, այսքան—համ կանանց այսքան—հայ գիւղացիներին, և այլն։

---

[11]) Քարտէզի վրայ նշանակւած են քաղաքները, ուր ընկերութիւնները ունեն որբանոցներ։

[12]) Մի դեղեցիկ կազմած թռուցիկ թերթում (Ֆրանկֆուրտի) կարդում ենք Սովեալներին և կառուցող արհեստանոցի համար, որի նպատակն է ամայացած գաւառներում տիրող կարօտութիւնը ոչնչացնել, հարկաւոր է մեզ տարեկան 50,000 մարկ։

[13]) «Deutschland unter den Armenien». Dr. P. Rohrbach. («=Գերմանիան Հայերի մէջ», դոքտ. Պ. Ռոհռբախ'ի), տպւած Preussische Jahrbücher ամսագրի մէջ 1899 թ. մայիս, էջ 316։

Բայց առանձին ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ այդ որբանոցները պահում են ոչ թէ պատահական կերպով հաւաքած դրամով, այլ մի քանի տարիներով ապահոված գումարով. այդ ապացուցանում է գերմանացու այն հիմնականութիւնը և լրջութիւն որ նշմարւում է իւր բոլոր ձեռնարկութիւնների մէջ։ Եւ յիրաւի, եթէ որբանոցները մօտաւոր ապագայի համար ապահովուած չը լինէին, կոմիտէները ամեն օր պիտի սպասէին այն րոպէին, երբ դրամի սակաւութեան կամ վերջանալու պատճառով, ստիպուած պիտի լինէին որբանոցները փակել և երեխայի տարածել փողոցը...

Դիտելու է հետևեալը։

Ամեն մարդ, որ մի շարք տարիներով ընթացքում կարող է վճարել 150 մարկ [14]) ստանում է մի հայ երեխայ, որը, որը այդ հաշուով ընդունուում է կառուցուած որբանոցներից մէկի մէջ. վճարողը ընդունուում է այդ որբի «Հոգացող հայր» կամ «մայր» (Pflegevater Pflegmutter)։ [15] Կան դէպքեր, որ մի որ և է գերմանացի մի քանի հայ որբերի «հայր» է հանդիսանում. լինում է և ընդհակառակը,—որ մի որբ ունի մի քանի «հայրեր» երբ մի խումբ անձեր պահում են մէկ կամ աւելի որբեր. Նոյնը անում են զանազան ընկերութիւններ, եկեղեցիները և այլն. Ամեն մի որբանոց ունի և ուսումնարան իւր զաւակների համար։ Բնականաբար բաւականին դրամ է մսխւում և ամբողջ ուսուցչական մարմինի վրայ, ուսուցչական առարկաների և այլք։ Վերջապէս յի-

---

[14]) Ֆրանկֆուտի կոմիտէն նշանակել է 150 իսկ Բերլինինը 100 մարկ։ Դվ. Ռոմբախը կարծում է, որ ինկատի ունենալով ներկայիս թանգութիւնը, 100 մարկը այլ ևս բաւական չէ։ Տես նորա լիակատար աշխատութիւնը էջ 317.։

[15]) «Ծնողների» և որբերի հետաքրքրական յարաբերութիւնների մասին յետոյ։

շենք և այն հիմնարկութիւնները, որոնց մասին վերև խօսք կար. դոքա՝ արհեստանոցներն են։ Սոցա բարոյական և գործնական նպատակի մասին այսպէս էր գրում Խարբերդից մի գերմանացի դեռ 1897 թ. «Զինել արհեստաւորներին իրենց արհեստի գործիներով և միջոց տալ նոցա նորից (այսինքն, կոտորածներից և կողոպուտներից յետոյ) աշխատել, — այդ օգնութեան գործի ամենալաւ միջոցներից է, և սա պիտի գործածւի ամենայն եռանդով... Գիւղացիների, ատաղձագործներին, կօշկակարներին և ուրիշ արհեստաւորներին բաժանեցինք մենք գործիքները, որպէսզի կարողանան նոքա հաց վաստակել»։ [16])

Ամբողջ այս օգնութեան գործի վրայ Բերլինի և Ֆրանկֆուրտի կոմիտէները միասին ծախսում են 350 հազար մարկ (=165,000 ռուբլի) տարեկան, և սորա մեծ մասը ընկնում է Ֆրանկֆուրտի կոմիտէի վրայ։ Այս 350 հազարից 250 հազար, այսինքն աւելի քան 113 հազարը մի շարք տարիների համար տպահովացրած գումարն է, [17]) իսկ սկզբից, ուրեմն 1895 թ. սեպտեմբերից մինչև 1899 գարունքը կոմիտէների միջոցով անցել է Գերմանիայից հայերի օգտին 1 միլիոն 800 հազար մարկ [18]) (830,000 ռուբլի). եթէ աւելացնենք այս թիւին և այն գումարները, որ ուղարկւած են եղել հայերին ուրիշ միջոցով (ոչ կոմիտէների), այն ժամանակ Գերմանացիներից տաճկահայերի օգտին ուղարկւած գումարի ընդհանուր թիւը կը հասնէ համարեա 2 միլիոն մարկի։ «Այս գումարի մեծ մասը գործադրւել է տառապեալների անմիջական օնութեան գործին։ [19]

---

[16]) «Der christliche Orient» 1897 մայիս—յունիս №, էջ 287։

[17]) Տես Ռոհրբախ'ի յիշած յօդւածը էջ 316—317։

[18]) Սոցանից Բերլինի կոմիտէն մինչև 1899 մարտի 14 մըսխել էր 613,497 մարկ. (արձանագրութիւն տարեայ ընդհանուր ժողովի Բերլինում։ Aus der Arbeit arm. H» 1899 April, էջ 43)։

[19]) Ռոհրբախ'ի յիշեալ յօդւած. էջ 316։

Իսկ ամբոջ Եւրոպան, և Հիւսիսային Ամերիկան աւել են մինչև այժմ 10 միլլիոն մարկ (4 միլիոն 600,000 ռուբլի)։

*
* *

ՈՐԲԱՆՈՑՆԵՐ

Բերլինի կոմիտէի որբանոցները [20]

Ու քաղաքում	հիմնարկութիւններ	որբերի թիւը
Ուրֆայ (Տաճկաստ.)	5 որբանոց, 1 արհեստանոց, 1 հիւանդանոց բնակիչների համար, 1 մասնաւորապէս որբանոցի զաւակների համար և 1 դեղատուն։	300 որբ.
Դիարբեքիր (Տաճկ.)	1 որբանոց	120
Ուրմիայ (Պարսկաս.)	1 »	80
Խոյ (Պարսկաստան)	1 »	136
Ռուշչուկ (Բուլղար.)	1 »	20
Վարնա (Բուլղ.)	Մատաղութիւն կայ բանալ մի ապաստարան։	
	Ընդամենը . . .	654 որբ

Փրանկֆուրտի որբանոցները (ընդհանուր էյ Տաճկաստանում)

Ուստեղ	Հիմնարկութիւները	Որբերի թիւը
Բերեկ (Պոլսի մօտ)	1 որբանոց	95 աղջիկ
Մեսսերիյ	4 որբանոց, մի հիւանդանոց և մի ապաստարան այրի և հիւանդ կանանց համար։	155 տղայ 121 աղջիկ
Հիւսեննիկ	3 որբանոց	10 տղայ 31 աղջիկ

[20]) Թերը քաղում ենք Բերլինի—կենդրոնի օրգանից. «Aus der Arbeit des armenischen Hilfswerks» Now. 1899 էջ 1.

Պիրջենջ	2 որբանոց	40 տղայ
		12 աղջիկ
Պալու	4 որբանոց	80 տղայ
		70 աղջիկ
Մարաշ	3 որբանոց և	78 տղայ
	1 արհեստանոց	100 աղջիկ
Վան	2 որբանոց	170 որբ
Ատտայ բէյ (Ամալսիայի մօտ)	2 որբանոց. այս երկու որբանոցներին պատկանում է և ահագին տարածութեան մի կտոր հող (4,000 գերմ. մորգէն) «չափահաս որբերի ընակութեան համար»։ Այստեղ կան փականքի, ճախարակագործութեան և աղիւսի գործարան։	10 տղայ
Հաճին	1 որբանոց	100 որբ
	Ընդամեն . . .	1,077[21] որբ
	Եթէ այս գումարին աւելացնենք և այն որբերի թիւը, որոնք այս կոմիտէի միջոցով բերուած են Գերմանիա և տեղաւորուած են զանազան գերմանական ընտանիքներում	65[22] որբ
	Կը ստանանք . . .	1,142 որբ

[21]) Ինչպէս տեսնում է ընթերցողը, մի քանի քաղաքների վերաբերեալ ցոյց չէ տրուած տղաների և աղջիկների թիւը առանձին, ուստի մեզ մնում է ցոյց տալ երկու սեռից ընդհանուր գումարը։ Բերլինի կոմիտէն ամենևին չէ ցոյց տալիս սեռի թիւը առանձին։

[22]) Այդ պատահել է անմիջապէս կոտորածներից յետոյ, երբ կոմիտէները դեռ չունէին ապաստարաններ Արևելքում։ Այս 65-ի առիթով յայտնում է համապատասխան կոմիտէն, որ նա տալ ևս չի բերում որբերը Գերմանիա։

Ուրեմն Բերլինի և Ֆրանկֆուրտի կոմիտէները [23]) միասին պահում են ընդամէնը . . . . . 1,798 որբ

Այստեղ էս կը նկատենք, որ ամբողջ Եւրոպան և Ամերիկան միասին պահում են մինչև 6000, (կամ ըստ ուրիշ աղբիւրների – 5000) հոյլ երեխաներ. արդեօք սոքա ամենքը որբ են, այդ յայտնի չէ մեզ։

Այս որբ-ապաստարանների գլխաւոր հսկողները, տեսուչները գերմանացիք, կամ աւելի ճիշդն ասած, ոչ-հայերը, եւրոպացիք են. իսկ երկրորդական պաշտօնները տրւում են և հայերին։ Սոցա գտնում ենք հետևեալ պաշտօններում — վարժապետի (հայերէն լեզուի), վերակացուի, «տան ծնողների»—Hauseltern (սրանք, ինչպէս երեւում է, նման են «տան մշակներին») և այլն։

ԿԵԱՆՔԸ ՈՐԲԱՆՈՑՈՒՄ ԵՒ ՈՒՍՈՒՄԸ

Այստեղ գործադրւում այն սկզբունքը, որ երեխան ըստ կարելոյն պիտի անէ ամեն բան, ինչ որ անհրաժեշտ է նորա կենքի համար։ Հետևեալ ցուցակը (Բեբեկի աղջկերանց որբանոցի), որը նկարագրում է որբանոցի մէջ տիրող կարգը և կեանքը, պարզ ցոյց է տալիս այդ։

Ժամը $6^1/_2$-ին (առաւօտեան) անկողնից վերկենալը։ Մեծերը լւանում են փոքրերին և հագցնում են նոցա։ Երկու մեծ աշակերտներ հետևում են միջակների երես լւանալուն և երկու ուրիշ մեծերը մաքրում են դպրոցի սենեակը։

Ժամ $7^1/_4$ Նախաճաշիկ։

Ժամ $7^1/_2$ Առաւօտեան աղօթք։

» 8—11 Դասեր I. և IV. դասարաններում։

---

[23]) Աւելի ճիշդ կը լինէր ասել ապաստարան են տւել, որովհետև միջակ 65 որբերը կոմիտէների հաշւով չեն պահւում։

» 11—12 Ասեղնագործութիւն IV. դասատան և խաղեր I. դասատան։
» 8—10 Տնային աշխատանքներ (Hausarbeiten) (II. և III. դասատան աշակերտներ)։
4 երեխայ մաքրում են ճաշի սենեակը, ափսեները և բաժակները։
3 երեխայ մաքրում են բոլոր լամպարները։
3 » օգնում են ուլթոյելու։
2 » օգնում են խոհանոցում։
10 » մաքրում են սանդուխքները և շաբաթը մի անգամ լւանում են։
8 » սրբում են կօշիկները } փոփոխաբար ա-
8 » մաքրում են կանաչեղէնը } մեն մէկը 1 ժամ։
2 » մաքրում են կլոզէտները։
2 » աւելում են դասատունները (այն աշակերտների համար, որոնք պարապւում են այստեղ կէսօրից յետոյ)։
6 » կարկատում են։

Ժամ 10—12՝ ովքերը ժամը 10-ից յետոյ տնային աշխատանքը վերջացնում են արդէն, դասերն են պատրաստում (Schularbeit) և ով որ այս էլ վերջացնում, օգնում է կարկատանքի գործում կամ զբաղւում է ասեղնագործութեամբ IV. դասատան աշակերտների. հետ։

Ժամ 12—$1^1/_2$ ծաշ և ազատ ժամանակամիջոց։
» $1^1/_2$—$3^1/_2$ Դասեր IV., III. և II. դասատ. մէջ։
» $3^1/_2$—4 Հանգստութիւն։ Տալիս են հաց և կաթ։
» 4—5 Դասեր II., III. և IV. դասարաններում։
» 5—6 Դասեր II. և III. դասարաններում. IV. դասարանի աշակերտները պատրաստում են իրենց դասերը։
» 6—$7^1/_2$ Ընթրիք, աղօթք և ազատ ժամանակ։
» 7 Մեծերը տանում են փոքրերին քնացնելու։

Ժամ $7^1/_2$—$8^1/_2$ IV և III դաս. աշակերտները պատրաստում են իրենց դասերը։

» 8 Քնում են II դասատան աշակերտները։

» $8^1/_2$ Քնում են III. և IV. դասատան աշակերտները։

Տնային աշխատանք փոխուում է ամեն շաբաթ։

Որբանոցները, ինչպէս տեսնում է ընթերցողը, միևնոյն ժամանակ և ուսումնարաններ են։ Պատկեր տալու համար, թէ ինչ ուսում են ստանում նոցա մէջ հայ երեխաները, կը բերենք Բեբեկի աղջկանց որբանոցի դասերի ցուցակը [24]։

	1 դասատ.	2-դ դաս.	3-դաս.	4-դ դաս.
Կրօն	3 ժամ [25])	4 ժամ	4 ժամ	6 ժամ
Հայոց լեզու . . .	3 »	4 »	4 »	4 »
Գերմաներէն . .	4 »	4 »	4 »	4 »
Ֆրանսերէն . . .			2 »	4 »
Անգլիերէն . . .				2 »
Թուրքերէն . . .				2 »
Պատմութիւն . .				2 »
Աշխարհագրութիւն.			1 »	2 »
Թուաբանութիւն .	2 »	2 »	2 »	3 »
Երգեցողութիւն .	2 »	2 »	2 »	2 »
Նկարչութիւն . .			1 »	1 »
Ձեռքի աշխատանք	4 »	4 »	4 »	4 »
Ասեղնագործութիւն				6 »
Ընդամէնը . .	18 ժամ	20 ժամ	24 ժամ	42 ժամ

[24]) Նախնթաց թվերը վերցրած ենք Ֆրանկֆուրտի կոմիտէի մի թռուցիկ թերթից. նոյնը արտատպված է և իւր օրգանի. Mittheilungen aus dem Orient vom deutschen Hilfsbunde für d. chribtliche Liebeswerk im Orient». 1899 № 7.

[25]) Unsere Waisenhäuser im Orient Zweiter Bericht des «Deutschen Hilfsbundes für Armenien. 1897 էջ 18.։ Այս միակ ցուցակն է, որը մեզ յաջողվել է գտնել։ Աւելի յահեկան կը լինէր ծանօթանալ, ինչպէս աղջիկների այնպէս և տղաների դպրոցների նոր ցուցակների հետ. բայց Հիլֆսբունդ'ի բոլոր հրատարակութիւնների մէջ չըկարողացանք այդպիսին գտնել։

Այս ցանկից երևում է, որ գերման ընկերութիւնը (Հիլ-ֆսբունդ՝ը) տալիս է, գոնէ ինչ վերաբերում է աղջիկներին, իւր հայ որբերին աւելի գործնական, քան տեսական գիտելիքներ։ Ահա այն առարկաները, որոնք առաջի դասարանից մինչև վերջինը անընդհատ ուսուցանում են. կրօն, հայերէն, գերմաներէն, թուաբանութիւն, երգեցողութիւն, ձեռի աշխատանք. իսկ պատմութիւնը, նկարչութիւնը, աշխարագրութիւնը, ֆրանսերէնը, անգլիերէնը սկսում են բարձր դասարաններից, այն էլ սակաւաթիւ ժամերով (բացի ֆրանսերէնը)։ Բացի այդ շահեկան է համեմատել կրօնի, գերմաներէնի և հայերէնի ժամերի թիւերը։ Կրօնը ունի 17 ժամ, գերման. լեզուն—16, հայերէնը—15։ Այս վերջին համեմատական թիւերի վրայ որ և է մէկը գուցէ և կարողանար ցոյց տալ, ինչպէս ապացոյց այն կասկածանքների հիմնաւորութեան, որոնք տարածուած են առ հասարակ մեր հասարակութեան մէջ, այսինքն. 1) որ Հիլֆսբունդ՝ը ձգտում է իւր հիմնարկութիւններով բողոքական գարձնել հայերին և 2), որ նա մտադիր է հայ որբերից դաստիրակել ոչ թէ հայեր, այլ գերմանացիք։ Թէպէտ ես չեմ կարծում, որ Հիլֆսբունդ՝ի գործիչները իրենց հայկական օժանդակութեան գործում ղեկավարւեն լոկ մարդասիրական ըզգացմունքներով ազատ որ և է միտումից, այնու ամենայնիւ կ՝պնդեմ, որ յիշեալ կասկածները գոնէ այն տեսակէտով և պարզաբանութիւններով, որոնցով նոքա առհասարակ արտայայտում են—սխալ են։ «Օգնութեան միութիւնը» անշուշտ ունի բողոքական ձգտումները Ծաճկա Հայաստանում, բայց այդ կրօնական ձգտումները բոլորովին այլ տեսակի են, քան թէ մենք նոցա երևակայում ենք. այդ կ՝փորձենք պարզել յետոյ, առայժմ կը բերենք գերմանական ընկերութիւնների հրատարակութիւններից մի քանի քաղուածներ, այդ երկու կէտերը՝ հաւատաւորսութեան (պրոզելիտիզմ) և ապազգացումի (dénationalisation) հարցերը լուսաբանելու համար։

ԱՊԱԱԶԳԱՅՆԱՅԻՈՄԻ ՀԱՐՑԸ։ Հիլֆսբունդ'ի հրատարակութիւններից և նորա գործիչների նամակներից չի երևում, որ հայ որբերի դաստիարակութեամբ նա կամենար գործել հակահայկական ուղղութեամբ. հայ որբերը զրկել իրենց ազգութիւնից, խլելիրենց ազգից—այդպիսի ձգտումներ բոլորովին բացակայում են այստեղ։ Ընդհակառակն, «Օգնութեան միութեան» գործիչները ղրական կերպով ասում են, ինչպէս կ'տեսնենք ներքև, և աշխատում են որպէս սկզբունք անցկացնել հետևեալ գաղափարը. հայ որբերը—հայ են և պիտի հայ մնան. ապագայում նորա պիտի գործեն իրենց ազգի և հասարակութեան օգտին։

Յայտնի ամերիկական միսսիոնար դ-ր Ռայնոլդս (Reynolds), որը տասնեակ տարիներ հայ երեխաների դաստիարակութիւնով է զբաղուել Տաճկաստանում և որին գերմանական Ֆրանկֆուրտեան կոմիտէն յանձնել է տապայժմ իւր Վանայ որբանոցի ղեկավարումը, գրում է. «Ամենից առաջ մենք ցանկանում ենք դաստիարակել երեխաներին մաքուր և օգտաւէտ կեանքի համար և որքան կարելի է կրթել նոցա որպէս հայերի, որպէս զի, եթէ պայմանները այդ թոյլ կը տան նոքա վերադառնան իրենց տները առանց դժուարութեան։ Մեր դաստիարակութիւններով յոյս ունինք միջոց տալ նոցա կրթողական'կերպով ազդելու'իրենց'շրջանի վրայ» [26]։

Նոյն գաղափարը, այսինքն, որ որբերի կրթութեան մէջ ի նկատի է առնւում դոցա ապագայ գործունէութեան հայկական շրջանը, երևան է գալիս դ-ր Բելկի (Belck) և դ-ր Լեհմանի (Lehmann) հաշուետուութիւնից (Bericht)։ Այս անձերը, որոնք Վանի սեպաձև գրութիւնների ուսումնասիրութեան համար այդ քաղաքում երեք ամիս (1899) անցկացրին, հիւր են եղած դ-ր Ռայնալդսին և իրենց հաշուետարութեան մէջ լիշել են նաև որբանոցների գործունէութեան

[26]) Շարաթական։

մասին։ «Կարելի է յուսալ, գրում են սոքա ի միջի այլոց, որ եթէ այստեղ (այսինքն, յիշեալ դպրոցներում) դաստիարակուող տղաները և աղջիկները, որոնցի ոմանք բոլորովին անուսում են եկել դպրոցը, կ'վերադառնան (յետոյ) իրենց գիւղերը, որպէս ուսուցիչներ, արհեստաւորներ և հաւատարիմ քրիստոնեաներ, դոքա դրդիչ օրինակ կ'լինին իրենց հայրենակիցների համար և օրհնեալ միջոց ամբողջ ազգի մտաւոր և բարոյական մակերևոյթը բարձրացնելու համար»։ [27]) «Մենք չենք ուզում», գրւած է ուրիշ տեղ, «երեխաներին բարձր ուսում տալ, որը նոքա յաճախ ստանում են ամերիկական վարժարաններում. ամենագլխաւորը, ինչ որ պակաս է, այդ — հմուտ արհեստաւորներն են։ Այդ նպատակով Մեսսերէյում սարքել ենք մենք չափահաս տղաների համար արհեստանոցներ, ուր նոքա սովորում են կօշկակարութիւն, դերձակութիւն և ատաղձագործութիւն»։ [28]) Այս խօքերը կողմնակի կերպով ապացուցանում են նոյն ցանկութիւնը — հայ որբերը կրթել հայերի համար և համաձայն իրենց պահանջներին։ Հետաքրքիր է նոյնպէս, որ պաստոր Էրնստ Լոհմանը, Ֆրանկֆուրտի կոմիտէի վարիչը, այցելելով 1899 թ. սկզբին Փոքր Ասիայի գերմանական որբանոցները, իւր նամակներից մէկում, (Սիւասից), դիմում է հայ որբերի գերմանական «ծնողներին» խորհուրդ է տալիս սոցա, որբերին այլ ևս պարգեւներ չուղարկել Գերմանիայից։ « բպէս ամենալաւ պարգեւ», ասում է նա, «ես կառաջարկէի ուղարկել դրամ մեր որբերի ապաստարանների վարիչներին, որպէս զի սոքա գնեն երեխաների համար հայկական գրքեր, որոնք կը մնան նոցա

---

[27]) Wan und das Elsass—lothringische Waisenheim daselbst. 1897 երես 25.։

[28]) Zweiter Bericht über die Arbeit d Elsass—Lothringischen Hilfscomités in der türkischen Provinz Wan 1899. էջ 15.

համար իբրև գեղեցիկ յիշատակարան նոցա ամբողջ կեանքի ընթացքում»..։ Աւելացնենք այստեղ, որ այն հանգամանքը, թէ Հիլֆսբուռնդ'ը, ինչպէս երևում է, գերադասում է շատերին տալ ստորին ուսում, քան թէ քչերին բարձրը, մեր կարծիքով, նոյնպէս ապացուցանում է, որ «Օժանդակութեան միութեան» գործիչները ի նկատի ունին տաճկահայ բնակիչների պահանջները, ամենատարրական կարիքները, և ոչ թէ իրենց որ և է շահերը։ Դա ընդունուած է, որպէս սկզբունք, և ի հարկէ հարկաւոր դէպքում, գերմանացիք միջոց են տալիս հայ երեխաներին շարունակել իրենց մըտաւոր զարգացումը։ Դեռ 1897 թ. պաստոր Բրոկէս-ը (Brockes) գրում էր Թիւրքիայից Բեբեկի որբանոցի մասին. «Առաջի (ըստ մեր հաշուի—վերջին) դասատան մէջ 8 ից մինչեւ 14 տարեկան երեխաներ են։ Այս դասատան մէջ հաւաքել ենք մենք բոլոր ընդունակ և աշխատասէր երեխաները, որոնք հիմք են տալիս հաւատալու, որ բարձր [29]) ուսումը նոցա համար արդասաւոր կը լինի։ Իմ կարծիքով, ոչ թէ երեխաների ծնողների (վախճանուած) դասակարգը, այլ երեխաների ընդունակութիւնը և աշխատասիրութիւնը վճռորոշական պիտի լինին վճռելու համար թէ հարկաւոր է արդեօք տալ նոցա բարձր ուսում, թէ ոչ։ Նոյն 1897 թ. գերմանական «Börsenkurier» թերթի Կ. Պոլսի թղթակիցը, նկարագրելով այդ թերթի մէջ Բեբեկի որբանոցին տուած այցելութիւնը, ի միջի այլոց ասում է. «Համաձայն իրենց ընդունակութիւնների՝ երեխաներից պատրաստում են վարժուհիներ կամ աղախիներ (Dienerinnen), և մեծերը արդէն աշխատում են տնարարութեան մէջ» [29])։ Ուրեմ որբանոցների վարժապետների և վարիչների նամակներից երևում է, որ պաստոր Բրոկէսի կարծիքը և Բեբեկի

---

[29]) «Բարձր ուսումը» այստեղ պիտի հասկանալ ինչպէս ուսում, որը սկզբնականից աւելի բարձր է։

որբանոցում գործադրուող սկզբունքը ընդունած գաղափար է բոլոր որբանոցների գալրոցներում։ Կը բերենք մի քաղուածք Վանայ որբանոցի կառավարիչ գ. Ռայնոլդսի նամակից առ Էլսաղ Լոմբրինգիալի ճիւղ. կոմիտէն. «Աւելի ընդունակ տղաներից ոմանք ամբողջ իրենց ժամանակը պիտի նուիրեն ուսման, որպէս զի լեռոյ, երբ երկրի քաղաքական դրրութիւնը թոյլ կ'տայ, նոքա կարողանան իրենց գիւղերում ուսումնարաններ բանալ և ուսուցիչներ լինել։ Երեխաների մեծ զանգուածը գործադրում է իւր ժամանակը փոփոխաբար ուսումի, և արհեստի վրայ. նախաճաշից յետոյ կարճ դադար. սորանից յետոյ մի մասը գնում է արհեստանոցներ, մնալով մինչև ճաշի ժամը։ Այստեղ սովորում են նոքա ոստայնագործութիւն, դերձակութիւն, հացթխութիւն, դարբնութիւն և կաշեգործութիւն. նոքա իրենք պատրաստում են իրենց շորերը թելից սկսած մինչև գործուածը, իրենց ոտնամանները՝ կաշուից սկսած մինչև կատարեալ կօշիկը։ Այն մասը, որ ուսումնարան է այցելում, սովորում է (այս արհեստները) օրը մի ժամ և յետոյ ժամ 9—12 անցնում են դասատուները... մենք չենք ձգտում տալ նոցա մեծ գիտութիւններ, մենք ցանկանում ենք միայն գիտութիւնների տարերքը սովրեցնել նոցա—կարդալ, գրել, փոքր ինչ թուաբանութիւն, աշխարհագրութիւն, թուրքերէն և գլխաւորապէս Աւետարանը»։

Այսքան առ այժմ «ապաստանացումի» մասին։ Առաջ բերած քաղուածքները բոլորն էլ թեր են, և եթէ մենք չենք բերել ոչ մի կտոր, որը այդ տեսակէտից «Հիլֆսբունդ ի ղէմն» խօսաց լինէր, այդ այն պատճառով է, որ մենք նորա գործիչների նամակների մէջ ոչ մի տող չենք գտել, որից բելիլինէր ենթադրել, թէ «Հիլֆսբունդ»ը իւր գործում ձգտում լինի որ և գերմանական քաղաքական-ազգային նպատակներ։ Այն գաղափարը, որ հայ որբերի գերմանական դաստիարակումը, կամ աւելի ճիշդն ասած, որ գերմանական որբա-

նոցները ապագայում կարող են մեծ ծառայութիւն մատուցանել Գերմանիայի արևելեան քաղաքականութեան, նորա եկեմտական շահերին Թիւրքայում, այդ գաղափարը արծարծուեց առաջին անգամ 1899 թ. գարունքին, այն էլ ոչ Հիլֆիսբունդ'ի, այլ մասնաւոր մարդու կողմից։ (Dr. P. Rohrbach. «Deutschland unter den Armeniern». Preusische Jahrbücher. 1899, Bd. XCVI Heft 2)։ Բացի դորանից, այս գաղափարը արտայայտուեց որպէս պատասխան գերմանական մի քանի լրագիրներին, որոնք յարձակւում էին Հիլֆիսբունդ'ի վրայ, ասելով, որ վերջինը իւր գոյութեամբ խանգարում է գերմանական քաղաքականութեանը Արևելքում։

Հիլֆիսբունդ'ի դէմ քաղուածքներ կարելի է գտնել միայն կրօնական, դաւանափոխական հարցի վերաբերեալ, մի հարցի, որը աւելի նուրբ, աւելի դժուար լուծելի է և որի մասին բաւականին շատ գրեց մեր և եւրոպական մամուլը։

Անցնենք այս հարցին։

ԿՐՕՆԻ ՀԱՐՑԸ

Ընթերցողը լիշում է վերև ներկայացրած դպրոցական դասերի ցուցակից, որ հայ որբերին եռանդուն կերպով կրօնի դասեր են տալիս որբանոցներում։ Հարց է առաջ գալիս —որ կրօնն է այդ, լուսաւորչականն թէ բողոքականն։ Կամ աւելի լայն ըմբռնած, այդ ուսումնարաններում չեն դառնում արդեօք հայ երեխաները յանկարծ, կամ փոքր առ փոքր, բողոքականներ, թէպէտ լինին նոքա նաև հայ բողոքականներ, և ուրեմն այդ 2000 որբերը չեն կարող արեօք լուսաւորչական եկեղեցու համար արդէն կորած համարուել

Այս հարցին վերին աստիճանի դժուար է որոշապէս պատասխանել։ Հիլֆիսբունդ'ի դործիչների նամակները, նիստերի արձանագրութիւնները, նորա բոլոր պարբերական և ուրիշ հրատարակութիւնների ընթերցումը չի տալիս հետազօտողին պարզ տպաւորութիւն, որպէս զի կարելի լինէր պատաս-

խանել բացարձակօրէն, «ոչ» կամ «այո»։ Այս հանգամանքը դրդեց ինձ դիմել ուղակի պ. դ-ր Ռոռբախ'ին (Dr. P. Rohrbach), որ թէպէտ Հիլֆսբունդ'ի (=Օգնութեան ընկերութեան) գործիչ չէ, բայց կողմնակի կերպով շատ է գործում յօգուտ «Օգնութեան ընկերութեան» և մանրամասնաբար ծանօթ է գորա գործերի հետ։ Նորա պատասխանը կը բերեմ յետոյ. առ այժմ, հաւատարիմ մնալով մեր սիստեմին, դիմենք անմիջական աղբիւրներին, այն է թէ ինչ է ասում Հիլֆսբունդը ինքը։ Հարկաւոր է այստեղ եւս նկատել, որ Հիլֆիսբունդ'ի գործողների այդ խօսքերը և կարծիքները երևան են եկել ոչ թէ իբրև պոլեմիկայի հետևանք, այլ նորա յայտնուած են եղել «Օգնութեան ընկերութեան». գործունէութեան առթիւ ծագած պոլեմիկայից առաջ, որպէս մտքերի հասարակ փոխանակութիւն այդ գործողների միջև։ Այդ պէտք է ի նկատի ունենալ, որովհետև այդ հանգամանքը առանձին արժէք է տալիս մեր առաջ բերելիք քաղուածքներին։

Մի բրոշիւրի մէջ, յառաջաբանում, հեղինակը որը պատոր է և, ինչպէս երևում է, պիտի որ շատ կրօնամոլ լինի) ի միջի այլոց ասում է. «Ոչ թէ ճշնշում, այլ ազատութիւն կրօնական կրթութեան մէջ, թոյլատրութիւն մինչև անգամ (!) հայկական ժամասացութիւնները այցելելու, կարգապահութիւն, աշխատասիրութիւն, խրախուսանք դէպի ինքնուրոյնութիւնը, և ամեն բանի մէջ կրթութիւն երկրի և բնակիչների բախտաւորութեան համար—սոքա են թանկագին տեսակէտները (Gesichtspunkte »։ Ռոռբախը, որին Էլզաս Լոթրինգի ճիւղ-կոմիտէն յանձնել էր այցելել Վանի որբերի իւր ապաստարանը, գրում մի նամակում 15 յունուարի 1899 «.. երկրորդը, որը առանձին կերպով տրգիւնաւէտ է, դա դ-ր Ռայնոլդսի (այդ որբանոցի դեկավարողի) սկզբունքն է երեխայոց կրօնական դաստիարակութեան նկատմամբ, թէպէտ այդ սկզբունքը միայն նորանը չէ». և այլն։

Ո՞րն է այդ սկզբունքը։

Դոքա, Ռայնոլդսի նամակներից մէկում (1896 թ.) գտնում ենք ի միջի այլոց հետևեալ խօսքերը. «Մենք ամենևին չենք փորձում հեռացնել նոցա (երեխաներին) իրենց ազգային եկեղեցուց. շաբաթը մի անգամ նոքա կարող են այցելել իրենց եկեղեցու ժամասացութեանը, իսկ նոքա, որոնց խիղճը թելադրում է չայցելել, կարող են և մնալ։ Բայց մենք աշխատում ենք համոզել նոցա, որ նոքա ըմբեռնեն Քրիստոսին, որպէս բարեկամի (Freund) և գործեն այդ հասկացողութեամբ, որպէս զի դուրս գնան այստեղից, որպէս փրկուած անձեր և թթխմորի պէս գործեն իրենց հասարակութեան մէջ...» [30]։ Նոյն հեղինակը գրում էր 1897 թ. «...Շաբաթի օրը, նոցա, որոնք այդ ցանկանում են, թոյլ է տրուած այցելել հայկական ժամերգութիւն։ Հաճելի է տեսնել, ինչպէս նոքա, իրենց չափահաս աշակերտների միջից ընտրուած, սպասներով գնում և գալիս են. բայց ամենքը պարտաւոր են կիրակւայ և չորեքշաբթւայ ժամասացութիւններին մեր սեփական (բողոքական մատուռում մասնակցելու. և Աւետարանի ուսուցումը օրւայ դասածրագրի պարտաւորիչ մասն է։ Նոցա դաստիարակութեան նկատմամբ մեր նպատակն է մատնանիշ անել Քրիստոսի վրայ, ինչպէս փրկութեան ճանապարհի վրայ, և համոզել նոցա անձնապէս միանալ նորա հետ (sich persönlich mit ihm in Verbindung zu setzen)։ Բայց մենք ամենևին չենք ձգտում անջատել

---

[30]) Dr. P. Rohrbach-ը անցեալ տարի մեծ ճանապարհորդութիւն է արել Տաճկահայաստանում և իւր տպաւորութիւնները նկարագրել է զանազան թերթերում, բայց դորանից ևս մի տարի առաջ նա այցել է Կովկասը, և Անդրկասպեան երկիրները։ Այդ ճանապարհորդութիւնը նա նկարագրել է »In Turan und Armenien» գրքի մէջ, որ արժանացել է որոշ ուշադրութեան։ Տես դորա մասին և „Братская Помощь„ 2 изд: Проф. Герве. Призваніе Россіи на Востокѣ;

նոցա իրենց ազգային եկեղեցուց. նոցա ապահովացրած է խղճի ազատութիւնը. օրինակ պաս պահելը և դորա նման սովորութիւնները. իսկ իրենց եկեղեցին յանձնելը ծանօթացնում է նոցա իրենց ժամասացութեան հետ։ Պասի շրջաններում և ուրիշ դէպքերում մենք մեր ժամերգութիւնը կատարում ենք լուսաւորչական եկեղեցու երաժշտութիւնով։ Մեր նպատակն է նոյնպէս, ինչ վերաբերում է սնունդին, հագուստին և սովորութիւններին, այնպիսի կենցաղավարութիւն մտցնել (որբանոցներում), որ մենք չ'բաժանենք նոցա երեխա հայրենակիցներից, որպէս զի նոքա անընդունակ չլինին (ապագայում) իրենց գիւղերում ապրելու. միևնոյն ժամանակ մենք դաստիարակում ենք նոցա այնպէս, որ նոքա յետոյ գործեն ժողովրդի մէջ ինչպէս թթխմոր։ *Մենք խուսափում ենք այնպէս կրթել նոցա, որ նոքա ցանկանան հեռու ապրել այս երկրից* (Հայաստանից)։ Ստորագրծումը հեղինակին է)։ «Նոքա հայ են և հայ պիտի մնան։

Թէ որբանոցների այս կրօնական կողմը որքան դժուար և մինչև անգամ Հիլֆսբուրգի համար մութ հարց է, ապացուցանում են այն տնթիւ կարծիքները և կշռադատութիւնները, որ գտնում ենք ընկերութեան հրատարակութիւնների մէջ։ Այդ հարցը, ինչպէս երևում է, շատ է զբաղեցնում նորան։ Ի՞ր Ռայնոլդսը ինքը պարզ ասում է այդ իւր մի ուրիշ նամակում (1897)։ «...Այն թէ, ինչ գիրք պիտի բերենք մենք դէպի լուսաւորչական եկեղեցին և ինչպէս պիտի ազդենք երեխաների վրայ, ի նկատի առնելով այդ եկեղեցին,— մեզ բոլորիս համար վերին աստիճանի լուրջ հարց է։ Անջատել նոցա բոլորովին իրենց եկեղեցուց, իմ կարծիքով, սխալ բան է, և ես ձգտել եմ խուսափել դորանից։ Երեխաներին ոչինչ չի ասւում ազգային եկեղեցուց հեռանալու կամ աւետարանականութիւնը ընդունելու մասին։ Բայց ես չէի ցանկանայ սխալ տպաւորութիւններ յառաջ բերել։ Երեխաները *ազատաւոր են* (ստորագծումը հեղինակինն է) մասնակցել

մեր բողոքական ժամասաստուԹիւններին և նոցա ուսուցչում է Քրիստոսի փրկուԹեան գործի (Eriösungswerk մասին, համաձայն Աւետարանի...»։ Ժողովրդի հետ յարաբերուԹիւններին մասին միսսիոնարը ասում է. «Պէտք է շնորհակալուԹեամբ յիշել, որ վերջին տարիների ընԹացքում մեծ փոփոխուԹիւններ եղան ժողովրդի յարաբերուԹեան մէջ մեզ հետ. նոքա համակրում են մեզ և մեր գործին։ Ի հարկէ, դեռ չի հասել ժամանակը, երբ կարելի լինէր յանձնել երեխաների կրԹուԹիւնը լուսաւորչական հոգևորականումԹեանը և հայ ուսուցիչներին, եԹէ կամենում ենք, որ նոքա ըմբռնեն ազատ ողորմածուԹեան մասին վարդապետուԹիւնը և բարի գործքերը նկատեն ոչ որպէս փրկուԹեան աղբիւր, այլ որպէս նորա հետևանք (wenn wir wollen, dass sie die Lehre von der freien Gnade erfassen und gute Werke nicht als eine Quelle der Erlösung ansehen, sondern als deren Frucht) *)։

Այդ պատճառով շատ ծանր կը լինէր ինձ համար յանձնել հայերին երեխաների դաստիարակուԹիւնը, որոնց ես այնպէս սիրեցի։ Հետաքրքիր է այս նամակի պատասխանը, որը գրեց Էլզաս-Լոթրինգիայի կոմիտէի գործավարը։

«Դուք ցանկանում էք իմանալ», գրում է նա Դր. Ռայնոլդսին, «ԹէԹ ինչ ենք մտածում մենք այդ խեղճ երեխաների դաստիարակուԹեան մասին։ Թէպէտ ես դեռ ևս չեմ հարցրած մեր (Կոմիտէի) կառավարչական ատեանից, բայց

---

*) Հայաստանեայց եկեղեցին, որպէս և բողոքականը, նոյնպէս չի ընդունում բարի գործքերը որպէս փրկուԹեան աղբիւր։ Օրինակ, այդ ոգով է գրած Մելիքսեդէկ եպ. Մուրադեանցի «ՊատմուԹիւն Քրիստոնէական եկեղեցոյ» (օրինակ, էջ 140), ԹէԹև պարտաւոր ենք աւելացնելու, որ հայ եկեղեցականների մէջ մենք չենք նկատած տոգորուածուԹիւն այդ մեծ վարդապետուԹեամբ։

Գան. Մուրճի խմբ.

առաջուց կարող եմ ասել, որ մենք լիովին ընդունում ենք ձեր գործունէութեան գինը։ Ձեր սիրելի կնոջ հետ դուք թողեք ամեն բան, նպատակ ունենալով որոնել Փըրկչի համար այն թանկագին մարգարիտները որոնք մի ժամանակ պիտի փայլեն Նորա թագի վրայ, և երբ ցոյց է տալիս Նա ձեզ այս խեղճ փոքրիկների միջոցով, պիտի մենք ձեզ խորհուրդ տանք արդեօք լանձնել նոցա լուսաւորչական քահանաներին։ Ոչ մի ժամանակ։ Եւ եթէ ուրիշ միջոցներով աւելի կարելի լիներ տնել երեխաների նիւթական բարօրութեան համար (թէպէտ ես շատ կասկածում եմ), այնուամենայնիւ ես կարող եմ ձեզ միայն ասել՝ պատմեցէք նոցա, երկրային անգթութեան այդ խեղճ զոհերին, հին հին առակը Քրիստոսի սիրոյ մասին։ որովհետև այստեղ, այս երկրում (=Էլզասում) մենք չենք կարող տեսնել նոցա, ուստի մենք ցանկանում ենք այնտեղ, վերև, հանդիպել սիրելի փոքրիկներին, երբ Տէրը մեզ կը կանչէ։ Միայն վստահ եղեք! Այստեղ աղօթում ենք ձեզ և ձերոնց համար, և ամենը, ինչ որ դուք այդտեղ անում էք մաքուր խղճով յանուն Աստուծոյ, մեր կողմից ճիշդ կը համարւի...», Մենք դիտմամբ առաջ բերինք նամակի այն տողերը, ուր հեղինակը խօսում է երեխաների հետ այն աշխարհում հանդիպելու մասին։ Հիլֆսբուռնդ'ի գրուածքները բոլորը լի են այսպիսի խոսքերով, պատկերներով և զգացումներով, և սա, մեր ցանկութեան համար՝ Հիլֆսբուռնդ'ի կրօնական հարցը պարզելու՝ շատ նշանաւոր կէտ է։

Նաև բնորոշ է Էլզասեան Կոմիտէի համար, երբ սա դեռ չէր պատկանում՝ Ֆրանկֆուրտի կենտրոնին, առաջին նիստի արձանագրութիւնը։ Այս նիստի մէջ նոյեմբերի 13, 1896 թ. վճռուեց մի հրաւէր (Aufruf) հրատարակել, որի մէջ պիտի նկարագրուէր հայ որբերի անբախտ դրութիւնը և պարզուէր նոցա օգնելու անհրաժեշտութիւնը։ Դորա համաձայն՝ Կոմիտէի գործունէութեան առաջին քայլերը պիտի

լինեն՝ հաւաքուած դրամներով բերել Թիւրքիայից Հայ որբեր և տեղաւորել նոցա գերմանական ընտանիքներում։ Արձանագրութեան 4-րդ կէտը ասում է. «Կոմիտէի գործունէութիւնը չի լինելու կրօնազուրկ (interkonfessionell), այլ նա պիտի լինի աւետարանական (ստորագծումը բնագրինն է)։ Ժողովը պարզ արտայայտում է նոյնպէս, որ նա հեռու է պահում իրան որ և է քաղաքական յեղափոխներից։ Նա ցանկանում է միայն քրիստոնէական սէր մատուցանել խեղճ որբերին և անբախտներին։ Գործունէութեան միջոցին, Կոմիտէն ստիպուեց մի քանի փոփոխութիւններ անել իւր դիտաւորութիւնների մէջ։ Նոցա մասին կարդում ենք. «Մեծ դժուարութիւնները, որոնք կապուած են երեխաների (Գերմանիա) բերելու հետ, վտանգը—զրկել նոցա իրենց ազգութիւնից, բայց և նոցանից եւրոպացի չը շինելով..., վերջապէս այն համոզմունքը, որ այդ երեխաները ամենից լաւ կը դաստիարակուեն իրենց սեփական երկրում և սորա օգտին, ընտիպեց».. և այլն։ Այս կոմիտէի որբանոցի մասին (Վանում, ղեկավարող—Դր. Ռայնոլդս) կարդում ենք ուրիշ տեղ՝ «Երեխաները այնտեղ բոլորն էլ դաստիարակւում են աւետարանական հաւատի մէջ»։ Եւ դեռ 1897 թ. Էլզասի կոմիտէի գործավարը, խօսելով այդ որբանոցի համար մի գերմանական ուսուցիչ ուղարկելու մասին, գրում էր. «... այսպիսով գուցէ կարելի կը լինի հիմք դնել Էլզասեան առաքելութեանը Արևելքում»։

Պ. Ռոբաթը ինձ ասում էր, որ ինչպէս դր. Ռայնոլդս այնպէս և Էլսաս Լոթրինգի ճիւղ-կոմիտէն ամբողջ Հիլֆրս բունդ'ի մէջ կարող են ամենա-բոլոքականամոլը համարել (և ես կաւելացնեմ, առհասարակ Ֆրանկիրուրտի կենտրոնը, համեմատաբար Բերլինի կենտրոնի հետ)։ Պ. Ռոբաթը կարծես թէ իրաւացի է. գոնէ աչքի է ընկնում այն երևոյթը, որ դաւանութեան վերաբերեալ կշռադատութիւնները գրանում ենք մենք գլխաւորապէս Էլզաս-Լոթրինգի ճիւղ-կոմի-

տէի հրատարակութիւնների մէջ։ Վերջինիս դաւանական դիրքը ստիպեց մեզ առանձին ուշադրութիւն դարձնել նորա կարծիքների վրայ։ Ինչ վերաբերում է Դր. Ռայնոլդսին, մենք օգտուեցինք ամենից շատ նորա գրուածքներից. և դորա համար ունէինք երկու պատճառ. առաջին նա գրում է դաւանական հարցի մասին աւելի մանրամասն քան ուրիշները, և երկրորդ նորա համոզմունքները այս կէտի վերաբերեալ շահեկան են, որպէս ամերիկական միսիոնարի. իսկ սոքա աւելի բողոքական կրոնամոլ են համարւում քան գերմանական բողոքական միսսիոնարները։ Այս հանգամանքները փոքր ինչ նոր լոյս են գցում մեզ հետաքրքրող հարցի վրայ։

Ինկատի ունենալով այդ, կարծում եմ, որ աւելորդ չէ նաև առաջ բերել Թիւրքիայի ամերիկական առաքելութեան, (Western Turkey Mission-ի), 1897 թ., յուլիս 3 կայացրած որոշումները։ Գլխաւոր կէտերը սոքա են. «Փրկութիւնը Յիսուսի Քրիստոսի միջոցով միակ հիմքն է ճշմարիտ կեանքի և ճշմարիտ մտածողութեան համար։ Այդ նպատակի համար օգտուում ենք մենք Աւետարանից, որ բոլոր քրիստոնեաների համար ընդհանուր հեղինակութիւն է կազմում, առանց հետևելու որ և է առանձին դաւանութեան կրօնական ուսումին, զգուշապէս խուսափելով այնպիսի հարցեր արծարծել, որոնք կարողեն եկեղեցու մէջ բաժանումներ յառաջ բերել։ Դէպի հայ լուսաւորչական եկեղեցին զգում ենք մենք ջերմ քրիստոնէական և սրտակից համակրութիւն, և ցանկանում ենք նորան ամեն բարգաւաճում։ Այդ պատճառով մենք կարծում ենք որ հարկաւոր է ամենամեծ հոգս քաշել, որ հայ որբերը, որոնք թէպէտ և տեղաւորուած են որբանոցներում բողոքական հսկողութեան տակ, այնուամենայնիւ հայեր մնան — լեզուի, սիրոյ մէջ դէպի իրենց ժողովուրդը, անմիջական պատրաստութեան մէջ օգտաւէտ լինելու այն հասարակութեան, որին նոքա պատկանում են։

«Ընդհանրապէս պիտի անկարելի համարել, որ կրօնական դաստիարակութիւնը որբանոցներում կատարուի լուսաւորչական եկեղեցականների միջոցով եւ մեր հսկողութեան տակ։ Դրա փոխարէն թոյլ է տուած այն երեխաներին, որոնց ազգականները այդ ցանկանում են, այցելել կիւրակի առաւօտները լուսաւորչական եղկեղեցին, և յատուկ դէպքերում նաև հասարակ օրերը։ Այդ եկեղեցու մէջ երեխաները կարող են անել այն, ինչ որ ցանկանում են իրենց քահանաները, և ոչ ոք չէ արգիլում նոցա ոչ խոստովանութիւնը, ոչ էլ հաղորդութիւնը։ Որբանոցների հսկողութեան գործում որ և է բաժանում կամ միացում առաքելութեան (միսսիոնի) և լուսաւորչական եկեղեցիների հետ, այժմ ոչ ցանկալի է, ոչ էլ հնարաւոր»։

Ամերիկական առաքելութեան (Western Turkey Mission) այդ որոշումը ընդունակ է, կարծես, փոքր ինչ ցրել ընթերցողի կասկածները գերմանական բողոքականների վերաբերեալ Ճաճկաստանում։ մանաւանդ որ ամերիկական առաքելութիւնը, կրկնում ենք, աւելի կրօնամոլ է համարւում, քան գերմանականը Արևելքում։ Եւ քիչ է մնում որ ընթերցողը այն եզրակացութեանը գայ, թէ «գուցէ ճիշդ է, որ Հիլֆերսբուռնգ'ը չի ղեկավարւում իւր գործունէութեան մէջ յեսային բողոքական նպատակներով». արդէն յաջորդ տողերը նորից ցրում են այդ կարճատև մոլորութիւնը և նորից դնում են նորան հին տեսակէտի վրայ։ «W. T. Mission-ի բերած որոշումների վերաբերեալ Դր. Ռոռբախը ասում է. «Ես կարծում եմ սոքա այն սկզբունքներն են, որոնց ի նկատի ունենալը երաշխաւորում է արգասաւոր յաջողութիւն որպէս աւետարանացման գործում, այնպէս էլ հայկական եկեղեցու համար մասնաւորապէս» [31]։ Բայց նոյն Դր. Ռոռբախը, մի

[31]) Խօսքը, ի հարկէ, ամերիկական որբանոցների մասին է այստեղ։

յոդուածում, խորագրած «Ինչ պիտի ի նկատի ունենանք մենք հայերի համար գործունէութեան մէջ», և տպագրուած Christliche Welt շաբաթաթերթերում, ասում է. «բողոքական առաքելութիւնը հայերի մէջ, ինքն ըստ ինքեան սխալ ձեռնարկութիւն է» (ist an sich ein verfehltes Unternehmen)։

Այսպիսի հակասութիւններով լի են Հիլֆսբունդ'ի=Գերմանական ընկերութեան) կամ նորան համակրող գերմանացիների կշռադատութիւնները «գերմանական բողոքական միսսիոնի» յարաբերութեան մասին դէպի հայ լուսաւորչական եկեղեցին և մենք աշխատել ենք այս հարցի վերաբերեալ առաջ բերել այն քաղուածքները, որոնք հակասում են միմեանց։ Այդ է պատճառը, որ այնքան դժուար է սկզբից որոշ կարծիք կազմել, թէ որոնք են Հիլֆսբունդ'ի ըստ որ ձգտումները։ Բայց հէնց այդ հակասութիւնների վերաբերմամբ կարելի է երկու ենթադրութիւններ անել, կամ Հիլֆսբունդ'ը ինքը չգիտէ հաստատ թէ ո՞ր տեսակի են նորա ձգտումները հայկական եկեղեցու վերաբերեալ, և այդ պատճառով նորա գործիչների կարծիքները ամեն քայլափոխում հակասում են միմեանց, և կամ՝ այդ հակասութիւնները չոկ երևոյթական են և այդպէս թւում են միայն կողմնակի մարդուն, որը չի ըմբռնած Հիլֆսբունդ'ի գործիչների խոկական միտքը։ Եթէ առաջի ենթադրութեան հետաղօտութիւնից յետոյ գանք բացասական պատասխանի, այսինքն, որ գերմանական ընկերութիւնը ինքը պարզ չէ ըմբռնում իր նպատակները (որ դժուար երևակայելի բան է), այն ժամանակ այդպիսի քննութիւնը գրեթէ ապարդիւն է դառնում, որովհետև այդպիսի եզրակցութիւն մեզ համար ոչ մի շահեկանութիւն չի կարող ներկայացնել. այսօր-վաղը Հիլֆսբունդ'ը կարող է պարզել իւր ձգտումները։ Իսկ եթէ մենք հասնենք դրական պատասխանի, թէ «Օգնութեան միութիւնը» ընդհակառակը ունի շատ որոշ և պարզ նպատակներ իւր գործի մէջ, ապա պիտի ընդունել որ նկատած հակասութիւնները երևոյթա-

կան են։ Այդ պատճառով, մեր ցանկութեան մէջ լուծել այսպէս ասած, Հիլֆսբունդ'ի «դաւանական պրոբլէմը», մենք կը փորձենք ներդաշնակել այդ հակասութիւնները մի աւելի ընդհանուր գաղափարի տակ։ Սա—յետագայ էջերում, ուր սկզբից ցոյց կ'տանք թէ ո՞ր կողմից և ինչ յարձակումներ են եղել Հիլֆսբունդ'ի վրայ և ինչպէս է նա պատասխանել։

*
* *

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԵՑ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիլֆսբունդ'ի վարչ եղած պաշտօնական և ոչ-պաշտօնական յարձակումների արձագանգները եղան պաշտօնական և մասնաւոր պատասխաններ։

Ա. պաշտօնական պատասխանները։

«Aus der Arbeit» թերթի 1899 թ. մայիսի համարում, Դր. Լեպսիուս'ը ի դիմաց Հիլֆսբունդ'ի՝ (Բերլինի-կենտրոնի) հետևեալ բացատրութիւնն է տալիս։ Առաջ կը բերենք բովանդակութիւնը։ Նախ ասում է, որ «Օգնութեան միութիւնը» տհաճութեամբ յետ է դարձնում «Köln. Zeitung»-ի մեղադրանքը, իբր թէ այդ միութիւնը իւր քրիստոնէական սիրոյ գործի մէջ «յայնածաւալ կերպով նուիրել է դաւանափոխական գործերին»։ Հիլֆսբունդ'ը իւր գործունէութեան մէջ ընդունել է որպէս սկզբունք՝ գործել համաձայնութեամբ այն եկեղեցիների վարչութիւնների հետ, որոնց պատգանում են երեխայքը. լուսաւորչական եղեղեցու կողմից ևս ոչ մի գանգատ չէ լսել նա։ «Մեր գործունէութեան շրջանում դաւանափոխութեան մի դէպք անգամ չէ պատահել, և եթէ գերմանական պաստորները քարոզել են երբեմն լուսաւորչական եկեղեցիներում, այդ պատահել է հայ լուսաւորչական քահանաների հրաւէրով։ «Այդ անուանում ենք մենք քրիստոնէական համբերատարութիւն»։ Պատրիարք Օրմանեանի նամակում մեղադրում են Վանի վիլայէթի կաթոլիկ միա-

սիոնարները. անկարելի բան է, որ բողոքականները դաւանափոխական քարոզչութեամբ պարապեն, որովհետև բողոքականութեան սկզբունքները արգելում են այդ։ Եթէ «Փէօլնիշէ ցայտունգ»ը կամենար, կը կարողանար, բացի այն նամակից, որ հրատարակել էր իւր էջերում, սատանայ և Պատրիարքի մի ուրիշ նանտկը, գրած Կ. Պոլսի մեծ պետութիւնների դեսպաններին։

Դեսպաններին գրած այս նամակում, Պատրիարքը հանդիսաւոր կերպով հերքում է, իբր թէ նա երբ և իցէ գանգատուած լինի Բ. Դրան հայերին օգնող օտար ընկերութիւնների վրայ։ Գերմանական օգնութեան հիմնարկութիւնները հաւանութիւն և պաշտպանութիւն են գտնում մինչև անգամ տաճկական գաւառների պաշտօնեաների կողմից։ Ինչ վերաբերում է «K. Z.»-ի խորհրդին, որ «Օգն. միութիւնը» թողնէ հայերին օգնելու գործը և հաւաքած գումարները գործադրէ գերմանացիների օգտին, այսինքն փողոց քցէ 1,600 հայ որբիկներին — «Օգնութեան միութեանը» անընդունակ է այդպիսի բարբարոսութեան։ Այստեղ Լեպսիուսը բերում է և պռուսական չորրորդ ընդհանրական սինոդի (29 նոյեմբերը 1897 թ.) որոշումը հայկական կոտորածների վերաբերմամբ։ Վերջապէս «Օգնութեան միութիւնը վնասակար չէ հանդիսանում գերմանական քաղաքականութեանը Արևելքում, ընդհակառակը, նա պատիւ է բերում գերմանական անուան։ Հիլֆսբունդ'ը հաւատացած է, որ այդպիսի յարձակումները ազդեցութիւն չեն ունենալու գործը համակրողների վրայ. նոքա կ'կրկնապատկեն իրենց եռանդը օգնութեան այս քրիստոնէական գործում, ի փառս այն Աստուծոյ, որը տնտանում է իրան որբերի և այրիների հայրը, և որը ցանկանում է, որ օգնութիւն հասցնի բոլոր մարդկանց և որ նոքա հասնեն ճշմարտութեան գիտութեանը»։

Այս «բացատրութիւնը» գրուած է շատ ջերմ և ազնիւ ոգով ու գրաւում է ընթերցողի վստահութիւնը։

Այս «բացատրութեան» մէջ մի բան մնում է ոչ-պարզ. Լէպսիուսը ընդհանուր խօսքերով ասում է, որ բողոքականների կողմից անկարելի է, որ դաւանափոխական քարոզութեան մի որ և է դէպք պատահած լինի, մինչդեռ Օրմանեանի նամակի մէջ պարզ ասւում է թէ «բողոքական և կաթոլիկ միսիոնարները գայթակղեցնում են հայերին» և այլն։ Այս փոքր ինչ մութ կէտը պարզւում է մի ուրիշ «պատասխան». յօդւածի միջոցով, որը արւած է մասնաւոր մարդու կողմից։ Այստեղ յօդւածագիրը, Դոքտ. Ռոռբախը (Rohrbach) ասում է, որ ս. պատրիարքի գրութեան մէջ ոչ մի խօսքով ասւած չէ, թէ բողոքական միսիոնարները գերմանացիք են։ Այդ ճիշդ է։ Ռոռբախը հաւատացնում է, որ այստեղ խօսքը ամերիկական միսիոնարների մասին է։ Այն ժամանակ ինչպէս պէտք է հասկանալ որ Օրմանեանը պնդում է դէսպաններին գրած նամակում, թէ նա երբէք չի գանգատւել ոչ մի *ստար* օգնող կոմիտէի վրայ։ Չէ՞ որ ամերիկացիք նոյնպէս ունին իրենց «օգնութեան կոմիտէները», հիմնարկութիւնները։ Մնում է ենթադրել, որ հարկաւոր է զանազանել օգնութեան հիմնարկութիւնները և նոցա պատկանող գործիչները՝ *կրօնական* միսիոնարներից, որոնց և գուցէ ի նկատի ունի ս. պատրիարքը իւր գանգատի մէջ։ Յամենայն դէպս կարելի է վերջնականապէս որոշւած և պարզւած համարել, որ Օրմանեանը ի նկատի չէ ունեցել *գերմանական* բողոքականներին, որովհետև Հիլֆսբունդ'ը «K. Z.»-ի յօդւածի երևան գալուց յետոյ, դիմեց ս. պատրիարքին հետևեալ հարցով. գանգատւել է նա արդեօք Բ. Դրան առջև գերմանական Հիլֆսբունդ'ի վրայ թէ ոչ։ Իւր պատասխանի մէջ ս. պատրիարքը ի միջի այլոց ասում է. «Որպէս զի նորից ապացուցանեմ իմ զգացումներս դէպի ձեզ, կը ցանկանամ բացատրել, ու ես երբէք ձեզ մեղադրող չեմ եղել, ոչ էլ թշնամի ձեր որբանոցներին. նորին գերազանցութիւն գերմանական դեսպանը յայտնել է ինձ, որ նա ոչ մի ժամանակ ոչ

մտածել է, ոչ ասել է, և ոչ էլ գրել, թէ ես ձեզ վրայ գանգատած և ձեր որբանոցների թշնամի եղած լինիմ։ Պատրիարքարանի արած գանգատը Բ. Դրան դաւանափոխութեան նկատմամբ չի վերաբերւում որբանոցներին, այլ այնտեղ բացառապէս ասւած է միայն, որ կրօնափոխութեան պայմանով դրամներ են բաժանւած եղել, որ իրօք և կատարւած է Վանի կաթոլիկ միսսիոնարների կողմից» [32]։

Հետաքրքիր է, որ այս վերջին նամակում յիշւած չեն բողոքական միսսիոնարները. լինին գոքա գերմանացիք, թէ ամերիկացիք։ Օրմանեանի նամակներից առհասարակ, դժուար է հասկանալ, թէ ով է զբաղւում դաւանափոխական քարոզչութեամբ հայերի մէջ, կամ պարապում են գոքանով բողոքականները թէ ոչ։ Բայց և իսկապէս տնտեղի կ'լինէր զբաղւել այստեղ այդ հարցի պարզաբանութեամբ, որովհետև այստեղ մենք գործ ունենք միայն գերմանացիների, կամ աւելի ճիշտն ասած, «Գերման. օգնութեան միութեան» հետ, և հարցը կարող է միայն այսպէս դրւած լինել—անում են արդեօք այդ բանը Հիլֆբրունդ'ի ներկայացուցիչները հայերի մէջ թէ ոչ։ Եթէ մենք ցանկանանք հիմնւել Օրմանեանի նամակի վրայ, այն ժամանակ պատասխանը կարող է միայն բացասական լինել։ Այն տեսակէտից, ինչպէս դնում ենք մենք մեր հարցը, ս. պատրիարքի վերոյիշեալ երեք նամակները մեծ վեզիրին, դեսպաններին և «Գերմ. օգնութեան միութեան» հակասական շմն հանդիսանում։ Ընդհակառակը, նոքա զանազան կերպ հաստատում են միևնոյնը, որ Հիլֆբրունդ'ը չի զբաղւում կրօնափոխական քարոզով։

Հիլֆբրունդ'ի Ֆրանկֆուրտի կենտրոնը իւր կողմից «Կ. Շ.-ի յօդւածի երևան գալուց մի քանի օր յետոյ, մի ընդհանուր ժողով հրաւիրեց, ուր յիշեալ լրագրին այսպիսի մի մի պատասխան խմբագրւեց։ Կ'բերենք մի քանի քաղւածներ։

---

[32]) Mittheilungen aus dem Orient. № 8 1899.

«Այն մեղադրանքները, որոնք անում են վերջին ժամանակները Հիլֆսբունդ'ի գործունէութեան դէմ միայն խրախուսում են մեզ նոր եռանդով շարունակել մեր սիրոյ գործունէութիւնը (unsere Liebesthätigkeit), այն գիտակցութեան հիման վրայ, որ այդպիսի թշնամութիւնը միայն պատիւ է բերում մեր գործին. այնտեղից, ուր անում են այդ յարձակումները, մենք գնահատութիւն չենք սպասում, որովհետև այնտեղ ընդունակութիւն չունին հասկանալու, թէ ինչ է կատարեալ եսազուրկ, քրիստոնէական սիրոյ գործունէութիւնը, և այդ պատճառով նոքա կասկածանքով են վերաբերւում դէպի այն, ինչ որ չեն հասկանում... Սկզբունքով մենք հրաժարւել ենք հիմնել Փոքր-Ասիայում որ և է բաղաքական համայնքներ և այդ միջոցներով (այսինք դրամով և պաշտպանելու խոստումքով) ոչ մի ժամանակ չենք դրդել որ և է լուսաւորչականի թողնել իւր եկեղեցին.., Բացի դորանից, ոչ մի «անշնորհքութիւն» մենք չենք գտնում պատոր Բրոկսի գործողութեան մէջ, որը Զէյթունում, մի աւետարանական ժամասացութեան ժամանակ, գործածելով աւետարանական մի բառը, խօսում էր «մեղքերի ազատութեան» մասին, և եթէ այս դէպքից օգտւում են մեզ մեղադրելու համար, դա ցոյց է տալիս որքան դժւար է, մեր հակառակորդների համար, մեզ մեղադրելու մի դրական պատճառ գտնել։ Այդպիսի մեղադրանքները ամենալաւ ապացոյց են, որ մենք ոչ մի առիթ չենք տւել արդար գանգատների... Վերջապէս այն խրատը (որը տալիս է «K. Z.»-ը), այսինք — «գործադրել մեր գումարները աւելի լուրջ և բարեյաջող նպատակների վրայ», — կարող են տալ միայն նոքա, որոնք ինչպէս քահանան և լեւտը, անցնում են սպանւածների մօտով, և որոնց համար, առևտրական շահերը աւելի արդարացի են, քան թէ խեղճերի բարեբախտութիւնը։ Մենք հաւատացած ենք, որ մենք աւելի ենք գործում Թիւրքիայի բարեկցութեան համար, քան թէ նոքա, որոնք այս երկրի վրայ նայում են

միայն ինչպէս մի գործունէութեան ասպարէզի վրայ իրենց շահերի համար։ Գերմանական Հիլֆսբունդ'ի ընդհանուր ժողովը վճռում է, աւելի մեծ եռանդնով և սիրով, քան մինչև այժմ, շարունակել սկսած շնորհալի գործը» [33])։

Այս ժողովում որոշուեց նոյնպէս, արտայայտել Իրոկսին Հիլֆսբունդ'ի կատարեալ վստահութիւնը, առաջարկել նորան, որ նա բացատրի իրա հետ պատահած դէպքը անմիջապէս գերմանական կայսրին։

Հետաքրքիր է նոյնպէս Էլսաց-Լոտարինգիայի ճիւղ-կոմիտէի պատասխանը, որը մենք [34]) տեղի պակասութեան պատճառով այստեղ առաջ չենք բերելու. այսքան կը նկատենք, որ այս պատասխանի մէջ ցոյց է տրուում կաթոլիկների վրայ, որոնց խարդախութիւնների շնորհիւ իբր թէ այդպիսի գանգատները են առաջ գալիս Հիլֆսբունդ'ի դէմ։ Այս ենթադրութեանը հանդիպել ենք մենք և մի ուրիշ տեղ. բայց սա անկասկած սխալ է. թէպէտ, իրաւ, որ «K. Z.»-ը հրատարակում է գերմանական կաթոլիկութեան կենտրոններից մէկում, Քեօլն քաղաքում, բայց անուամենայնիւ նրա Հիլֆսբունդ'ի դէմ արած գանգատների վրայ չի կարելի նայել, ինչպէս կաթոլիկական մի արշաւանքի վրայ Հայաստանի բողոքական միսսիոնարների դէմ, որովհետև, չէ՞ որ ս. պատրիարքի այն նամակում, որը լրագիրը բերում է, ս. Օրմանեանը գանգատւում է և կաթոլիկների դէմ։

Բ. *Մասնաւոր պատասխաններ։* Մեզ ծանօթ մասնաւոր կողմից եղած հերքումներից և բացատրութիւններից ուշադրութեան արժանի են Reichsbote լրագրինը, պարոն Ցելլէրի (Zeller) և պ. Ռոռբախինը (Rohrbach)։

Նախ յայտնելով իւր զարմանքը, որ այդպիսի մի թիւ-

---

[33]) Mittheilungen aus Or. № 7 1899.

[34]) Flugblatt des Els ss-Lothringischen Hilfscomités für Arm. 1899. էջ 4.

ցամացութիւն, ինչպէս պ. Բրոկ'ի հետ պատահած դէպքը կարողացել է յարձակումների պատճառ ծառայել, «Reichsbote» լրագրիը (№ 89, 1899 թ.) գրում է. «բացարձակապէս սխալ է հաւատացնելը թէ աւետարանական Օգն. միութիւնը ցանկանում է դաւանափոխութիւն քարոզել։ Մենք հաստատ գիտենք որ դա ճիշդ չէ. Հիլֆսբունդ'ը ձգտում է միայն գրքասիրտ գործերով և Աւետարանի քարոզումով զարթեցնել հայ լուսաւորչական եկեղեցու մէջ, որը խեղդուել է արտաքին ծէսերի մէջ, աւելի բարոյական-քրիստոնէական ու ոգեկան կեանք (mehr christlich-sittliches und geistges Leben zu erwecken)։ Նա չի ցանկանում հայերին անջատել իրենց եկեղեցուց, նոքա պիտի շարունակեն պատկանել այդ եկեղեցուն. բայց պիտի դառնան այդ եկեղեցու կենդանի անդամները։ «Աւետարանական Հիլֆսբունդ'ը (շարունակում է լրագիրը) բոլորի վերաբերմամբ էլ մաքուր խղճմտանք ունի, ինչպէս Թուրքի, այնպէս և գերմանիայի և լուսաւորչական եկեղեցու. որովհետև նա չի զբաղւում ոչ կրօնական, ոչ էլ քաղաքական քարոզներով. միթէ ամօթ չէ, որ մի գերմանական լրագիր անցնում է Թուրքերի կողմը և ասում է գերմանական «Օգն. միութեան»ը. «Հեռացէք, դուք խանգարում էք խաղաղութիւնը Արևելքում և վնասում էք մեր տնտեսական շահերին»։ Աւետարանական օգնութեան միութիւնը չափազանց բարձր գաղափար ունի քրիստոնէական պարտաւորութեան և գերմանական պատուի մասին, որ կարողանայ հետևել «K. Z.»-ի խորհրդին», Լրագիրը վերջացնում է նկատելով, որ եթէ գերմանացիք օտար և սխալ տեղեկութիւնների հիման վրայ, ինքները հալածեն իրենց սեփական հայրենակիցներին և մանաւանդ այնպիսի պատուելի անձերին, ինչպէս են պատուոր Բրոկ, Դր. Լեպսիուս, և Լոման'ը այն ժամանակ, ոչ թէ միայն գերմանական միսսիոնարների, այլ և գերմանական վաճառականի և առհասարակ գերմանացու անունը և դրութիւնը Արևելքում կը կոտրուի։

Ցելլեր'ի («Zur Beleuchtng der Angriffe auf das deutsche evangelische Hilfswerk in Armenien»)[35] յօդուածից, ուշադրութեան արժանի են հետևեալ պարզաբանութիւնները։ Անկարելի բան է, որ Հիլֆսբունդ'ը զբաղուի դաւանափոխական քարոզով, որովհետև նորա հրապարակագրութիւններից մէկում մինչև անգամ արտայայտուում է այն միտքը, թէ այն ժամանակ, երբ հայերը մարտիրոսութեամբ ապացուցին հաւատարմութիւնը դէպի իրենց եկեղեցին, արդէն ազնուութիւնը արգելում է կրօնափոխական քարոզ կարդալ նոցա մէջ։ Հետևել «K. Z.»-ի խորհրդին—փակել որբանոցները և հաւաքող գումարները մսխել գերմանացիների օգտին, անհնարին բան է, որովհետև այդ կ'նշանակէր քանդել գերմանական միսսիոնի գործ (ein deutsches Missionswerk), որին միացած են բիւրաւոր մարդիկ և որի ապագան ապահոված է։ Գերմանիայի աւետարանական քրիստոնեաների համար խղճմտանքի գործ է պատահած կոտորածներից յետոյ հայերին օգնելը և պախարակելի է, որ մի շարք լրագիրները թոյլ են տալիս իրենց այդպիսի թերեւամտութեամբ վերաբերուել խղճմտանքի այդ զգացմունքին։ Ճիշդ է, «Օգնութեան միութիւնը», սկսելով իւր եղբայրական օգնութիւնը չէր ղեկավարում և ի նկատի չունէր Գերմանիայի կառավարութեան շահերը և յարաբերութիւնները Թուրքիայում, բայց այդ չէ նշանակում, որ Հիլֆսբունդ'ի անդամները աւելի քիչ են հայրենասէր, քան թէ «K. Z.»-ի շրջանները։ «Օգնութեան միութիւնը» ամենևին անտարբեր չէ դէպի Գերմանիայի տնտեսական և քաղաքական շահերի յաջողութիւնը և նա ոչ մի ժամանակ չէ ցանկացել խանգարել այդ կէտում իւր կառավարութեան. ընդհակառակը նա դիմել է մի անգամ այդ կառավարութեանը, խնդրելով ցոյց տալ նորան «այն ճանապարհը, որով պիտի նա շարունակէ ընթանալ, ներդաշնակելով իւր քայլերը իշխանութեան ցանկութեան հետ»։

[35] Das Reich Christi (ամսաթերթի) Juni 1899.

Բայց ամենահետաքրքիրն է Դր. Ռոռբախի յօդուածը, «Գերմանիան Հայերի մէջ» (Deutschland unter den Armeniern) վերնագրով, որը երևան եկաւ անցեալ տարի «Preussisshe Jahrbücher» նշանաւոր ամսագրի մէջ։ Հեռատես մրտքերով հարուստ այս յօդուածը ունի և այն արժէքը, որ նրա հեղինակը, ինչպէս ասացինք վերև, շրջել է անցեալ տարի Մեծ Հայաստանը և Փոքր-Ասիան։ Նկարագրելով հայկական գաւառների ներկայ դրութիւնը և ցոյց տալով ինչ սարսափելի տնտեսական և այլ հետևանքներ առաջ բերին հայկական ջարդերը, հեղինակը ասում է, որ ուղղակի անգնահատելի է այն ծառայութիւնը, որը եւրոպական և ամերիկեան բարեգործութիւնը արել է Թիւրքիային, որովհետև եթէ այդ գաւառները որ և է բան կարող են տալ հիմա կամ ապագայում տաճկաց պետական գանձարանին, դա շնորհիւ Եւրոպայի և Ամերիկայի օգնութեան կոմիտէների է (էջ 316)։ Առանց այս կոմիտէների շատ գաւառների հայերը բոլորովին պիտի բնաջինջ եղած լինէին...։ Ռոռբախի կարծիքով հայկական կոտորածները Թիւրքիայի համար տանուլ տուած պատերազմի նշանակութիւն ունին. գալով այն հարցին, թէ արդեօք Հիլֆսբուռնդ'ը գնում է որ և է արդելքներ Գերմանիայի պետական քաղաքականութեանը Տաճկաստանում, թէ ոչ, նա ասում է, որ դժուար է երևակայել մի ուրիշ բան, որը այնպէս նպաստաւոր կերպով աջակցէր Գերմանիայի ներկայ արևելեան քաղաքականութեանը, որ է Թիւրքիան ուժեղացնել և հիմք դնել տնտեսական յարաբերութիւնների Գերմանիայի հետ, քան այդ անում են գերման «օգնութեան կոմիտէները»։ Գերմանական դիպլոմատիային պատիւ չէ բերում այն հանգամանքը, որ նա չի հասկանում օգտուել այդ կոմիտէներից, ուղղութիւն տալով և պաշտպանելով նոցա տաճկաց կառավարութեան առաջ (319—320)։ «K. Z.»-ի տուած խորհուրդը Հիլֆսբուռնդ'ին՝ թողնել օգնութեան գործը, կարող է բխել միայն անգիտակցութիւնից, թէ որքան խոր

գժգոհութիւն և տհաճութիւն յառաջ կարող է բերել այդ առաջարկութիւնը ժողովրդի մէջ։ Հեղինակը ասում է, որ ինքը փորձառութեամբ գիտէ, որքան առհասարակ իւր երկրի եսամոլական քաղաքականութիւնը բողոքներ է ծագեցնում գերմանական այն շրջանների մէջ, որոնք սովոր են ըզգալ և մտածել համաձայն կրօնի և բարոյականութեան։ Այս շրջանների մէջ այդպիսի յարձակումները բերում են բոլորովին հակառակ հետևանքներ և համակրութիւնը դէպի հայերը զօրեղանում է։ 350 հազար մարդ տարեկան ծախսել օտար ազգի տանջանքները մեղմացնելու գործին, դա կարող է լինել արտայայտութիւն միայն մի խոր քրիստոնէական մարդասիրական համակրութեան (319 — 320)։ Առաջ բերելով Օրմանեանի գրութիւնը մեծ վեզիրին, յօդուածագիրը ասում է, որ այդ նամակից երևում, որ գանգատ ուղղուած է Վանի վիլայէթի կաթոլիկական միսսիոնարների դէմ. այդ միսսիոնարները Ֆրանսիացիք են, և ինքը զարմանում է, որ «K. Z.»-ը այդ նամակով արշաւանք է սկսում Հիլֆսբունդ'ի դէմ։ «Օգութեան միութիւնը» *սկզբունքով* խուսափում է որևէ դաւանական քարոզչութիւնից, վերջապէս ս. պատրիարքի նամակի մէջ մի խօսք ևս չէ լիշուած, թէ բողոքական միսսիոնարները գերմանացիք են։ «Ամբողջ Ասիական Թիւրքիայում» ասում է Ռոռբախը, «Հայերի մէջ չէկայ ոչ մի գերմանացի բողոքական միսսիոնար, և ընդհակառակը այնտեղ գոյութիւն ունին մի շարք ամերիկական բողոքական միսսիոնարական կենտրոնները, որոնց շուրջը հաւաքուած և կազմակերպուած բողոքական համայնքների մէջ 30-ից մինչև 40 հազար հայ կայ»։ Հեղինակը նկատում է, որ Հիլֆսբունդ'ի վարիչները համաձայնութիւն են կայացրել ինչպէս Օրմանեանի այնպէս և Էջմիածնայ Վեհ. Կաթողիկոսի հետ, որ ճընշումի ոչ մի փորձ չէ անուելու հայ երեխայոց վրայ նոցա խըլելու համար իրենց ազգային եկեղեցուց. և Օրմանեանը իւր նամակի մէջ ամենևին չէ լիշում Հիլֆսբունդ'ի անունը (էջ

326)։ «K. K.»-ի յօդուածի ծագման մասին այսպէս է խօսումնա.

«Ես գուշակում եմ, որ այն սրամիտ ոստիկանական կոմմիսարը (որը արգելեց Բրոկէսի քարոզը Զէյթունում) հաղորդած է լինելու Կ. Պոլիս, պալատը, թէ Զէյթունում երևան է եկել մի վերին աստիճանի վտանգաւոր անձնաւորութիւն և թէ սեռութեան դրութիւնը գուցէ և ամենասուրբ կեանքը (այսինքն սուլթանի) վտանգի մէջ են։ Սորանից յետոյ, երևի, մի սարսափելի նոտայով դիմումն է եղած գերմանական դեսպանատանը, և մի որ և է թղթակից Կ. Պոլսում, որը այնքան է տեսել Զէյթունը, Հայաստանը և որբանոցները, որքան լուսնի միւս կողմը և որի ձեռքն էր ընկել այս հարցի հետ ոչ մի կապ չունեցող ս. պատրիարքի գանգատը, նստում է և գրում «K. Z.»-ին այն սքանչելի յօդուածը»։

Վերջին տողերում յօդուածագիրը նկատում է, որ վերին աստիճանի ցաւալի կը լինէր, թէ Թիւրքիայի հետ ապագայ տնտեսական յարաբերութիւնների տեսակէտից, և թէ Գերմանիայի բարոյական անուան համար, եթէ գերմանական արտաքին գործոց նախարարութիւնը ընդունէ «K. Z.»-ի տեսակէտը։ Նա աւելացնում է. «Գերմանական Հիլֆսբունդ'ի վարչութիւնը ոչ մի բան այնքան ուրախութեամբ չէ ողջունելու, որչափ ցանկութիւն՝ իւր գործունէութիւնը համաձայնելով կառավարութեան հետ, գիտակցաբար ծառայեցնել կայսերական արևելեան քաղաքականութեան մեծ նպատակներին։ Սկսած գործից հրաժարելու մասին խօսք չէ կարող լինել, և եթէ նորանից վնասներ են ծագում գերմանական հպատակների համար, եթէ մեր արտաքին գործոց նախարարութիւնը անընդունակ է հանդիսանում գերմանական շահերին օգտակար դարձնելու այս նիւթական հարուստ միջոցները, իդէալական անձնազոհութիւնը և Հիլֆսբունդ' իմքողջ փորձառութիւնը և չի կարողանում պարգել Թիւրքիայի կառավարութեան գործի էութիւնը — այն կէտի վերաբերմամբ կոմիտէները հրաժարւում են որ և է պատասխանատուութիւնից»։

ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ ՀԻԼՖՍԲՈՒՆԴԻ ՎՐԱՅ

Հիլֆսբունդ'ի (Օգնութեան միութեան) գործունէութեանը շատերը թշնամաբար վերաբերուեցին։ Այդ բողոքները կարելի է այսպէս դասաւորել. բողոքները՝ 1) տաճկական կողմից, 2) կաթոլիկների կողմից, 3) հայկական և 4) գերմանական կողմերից։

Բնական է, որ Սուլթանը չի ցանկանում, որ օգնութիւն և համակրութիւն ցոյց տրուի իւր ատած հայերին, նա լաւ հասկանում է, ի հարկէ, նաև որբանոցների քաղաքական նշանակութիւնը. բացի այդ, պետական ինքնասիրութիւնից նա չի ցանկանում, որ դրսից անմիջական կերպով իւր հպատակներին օգնութիւն հասցնի, ովքեր և լինին այդ հպատակները, թիւրքեր թէ հայեր, այն մտքով, որ եթէ իրօք մի որ և է կարիք լինէր՝ ինքը կարող կըլինէր օգնելու։

Կաթոլիկները, վաղուց ի վեր մրցելով Արևելքում ամերիկեան բողոքական միսսիոնարների հետ, նայում են Հիլֆսբունդ'ի վրայ եթէ ոչ որպէս մի նոր գործիքի բողոքականութեան տարածման Փոքր-Ասիայում և Հայաստանում, յամենայն դէպս ինչպէս մի կողմնակի միջոցի, որը իրենց կաթոլիկական քարոզչութեան դէմ կարող է դժուարութիւններ յարուցանել։ Ի նկատի ունենալով պապականների գործելու ձևերը, որոնք միշտ խարդախութիւններով են ներշնչուած և կռուելու ոչ մի միջոց չեն արհամարում, պիտի զարմանալ, որ այս կողմից «Օգնութեան միութեան» վրայ մինչև այժմ չեն արուած նշանաւոր յարձակումները. սա, գուցէ, կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Վատիկանը, տուհասարակ, ուրախ է Գերմանիայի զօրեղանալուն Արևելքում. Գերմանիայի միջոցով նա յոյս ունի աւելի լաւ պաշտպանել իւր շահերը, Թիւրքիայում, քան Ֆրանսիայի [36]։

---

[36]) «Zukunft» (=Ապագայ) գերմանական շաբաթաթերթում,

Հայերի կողմից անբաւականութիւնը և թերահաւատութիւնը ծագած են դաւանական հողի վրայ. այստեղ ասւում է, որ գերման Հիլֆսբունդ'ը օգտւում է հայերի աղետալի դրութիւնից, նոցա մէջ իւր աւետարանական քարոզութիւնը առաջ քշելու համար: Այս թերահաւատութիւնը արտայայտւած է եղել և մեր մամուլի մէջ, որը հիմնւում էր, ինչպէս անմիջական աղբիւրներ—թղթակցութիւնների վրայ այն քաղաքներից, ուր Հիլֆսբունդ'ը ունի իւր որբանոցները, որպէս և օտար թերթերի լօգւածների վրայ: Ս. պատրիարք Օրմանեանի նամակը մեծ վեզիրին, որը գրւած է եղել դաւանափոխութեան առիթով Հայաստանում, չի կարող լիշւել այստեղ որպէս այդպիսի թշնամական արտայայտութեան մի օրինակ. թէպէտ և այս նամակի վրայ, ինչպէս օտարները, այնպէս և հայերը լաճախ հիմնում են իրենց գանգատները Հիլֆսբունդ'ի նկատմամբ, բայց իսկապէս ս. պատրիարք Օրմանեանի գրութեան մէջ մի խօսք անգամ չի ասւած «Օգնութեան միութեան» (Հիլֆսբունդ'ի) մասին, նոյն իսկ ասւած էլ չէ թէ բողոքական միսսիոնարները, որոնց վրայ գանգատւում է նա մեծ վեզիրին,—գերմանացիք են:

Վերջապէս, գերմանական լարձակումները «Օգնութեան միութեան» վրայ անւում էին և մասամբ շարունակւում են, երկու տեսակէտից—քաղաքական ու բարոյական: Նոքա, որոնք ջերմեռանդօրէն փափագում են Գերմանիայի հզօրանալը Տաճկաստանում, ամեն կերպ աշխատում են ապացուցանել, որ Հիլֆսբուգ'ի գործունէութիւնը խանգարում է Գերմանիայի ազդեցութեան բնական զարգացմանը Կ. Պոլսում և ուզելով կոտրել Հիլֆսբունդ'ի անունը, սկսում են նւագել բարոյականութեան լարերի վրայ, վերագրելով նորա գործիչներին բողոքականութեան տարածման գործում գարշելի ձևեր.

1899 լուլիսի 16, կայ մի շահեկան լօգւած (Der Kaiser im Orient =կայսրը, Արևելքում՝ խորագրով) Վատիկանի դիրքի մասին դէպի Գերմանիայի Արևելեան քաղաքականութիւնը.

սորա նպատակն էր, ի հարկէ, զրկել Հիլֆսբունդ'ը այն համակրողներից, որոնք դրամ են ուղարկում նոցա յօգուտ Հայերի։ Բնականաբար գտնուեցան մարդիկ, որոնք հայատեաց չը լինելով, բայց չկարողանալով այս կամ այն պատճառով ըստուգել այդ լուրերը, լոկ բարոյական տեսակէտից սկսեցին պախարակել Հիլֆսբուդ'ին վերագրուող վատ գործերը։ Հետաքրքրական է, որ այս վերջինների թիւը շատ աննշան է, և այս հանգամանքը կարելի է, երևի բացատրել նորանով, որ մեծամասնութեան համար պարզ էր Հիլֆսբունդ'ի դէմ բողոքողների անբաւականութեան պատճառը, այսինքն, Գերմանիայի քաղաքական և ելևմտական շահերը Արևելքում։ Ինչ վերաբերւում է այն շրջաններին, ուր Հիլֆսբունդ'ը վայելում է կատարեալ համակրութիւն և նիւթական օգնութիւն, այստեղ յարձակումների հետևանքները բոլորովին հակառակ հանդիսացան,—նիւրատուութիւնները շատացան։

Ցոյց տալով «Օգնութեան միութեան» դէմ եղած բողոքների չորս գլխաւոր աղբիւրները, այժմ կը զբաղուենք աւելի մանրամասնօրէն գերմանական կողմից եղած յարձակումներով, և միայն սոցանով, որովհետև Սուլթանի և կաթոլիկների դժգոյութիւնները այն տեսակի են, որ նոցա աւելի լաւ պարզաբանելը հազիւ թէ կարողանայ նոր լոյս գցել մեզ հետաքրքրող հարցի վրայ. ինչ վերաբերւում է հայկական գանգատներին, ցաւում ենք որ մեզ յայտնի չէ հայոց լրագիրների Թիւրքիայից այս առիթով գրուած թղթակցութիւնների բովանդակութիւնը. միւս կողմից էլ, ինչպէս ասացինք, հայկական գանգատները մասամբ հիմնուած են եղել նոյն գերմանական աղբիւրների վրայ։

Բնական է, որ պաշտօնական Գերմանիան, իւր ներկայ թիւրքամոլ քաղաքականութիւնը ի նկատի առնելով, չի կարող գրական կերպով, բացարձակօրէն, ո՛չ որ և է օգնութիւն հասցնել հայերին, ո՛չ էլ համակրութեամբ վերաբերուել դէպի նոցա։ Զարմանալի չէ նոյնպէս, որ նոյն երկրի կառավա-

բութիւնը չի կարող գոհ լինել, երբ մինչև անգամ ոչ-պաշտօնական Գերմանիան, ինչպէս, օրինակ, Հիլֆսբունդ'ը օգնութիւն է հասցնում հայերին և այսպէս թէ այնպէս զանազան կասկածանքներ և տժգոյութիւններ է ծագեցնում Սուլթանի մէջ։ Այս կասկածանքները տաճկական շահերի տեսակէտից ևս կարող են բոլորովին անհիմն լինել. բայց գերման կառավարութիւնը չի կարող զբաղուել դոցա քննութեամբ, չի կարող հեռագրել իւր Պոլսի դեսպանին, որ նա ապացուցանէ Սուլթանին, թէ սա սխալւում է, և հանգստացնէ նորան։ Այդպէս կը գործէր Բերլինը, եթէ նորա յարաբերութիւնները դէպի Բարձրագոյն Դուռը չէզօք լինէին. իսկ այժմ, մտադրութիւն ունենալով մի ահագին «արևելեան» ծրագիր իրագործելու, երբ նոյն ժամանակ բոլոր մնացած պետութիւնները, Սուլթանի գահը շրջապատած, անդադար մատնանիշ են անում իրենց պահանջների վրայ, խնդրելով, որ այլ և այլ շինութիւնների արտօնութիւնները իրենց տրւի, և երբ այս կամ այն պետութեան յաղթանակը այդպիսի դէպքերում, կախւած է լինում շատ անգամ Սուլթանի բոպէական յաճոյքից, գերմանական կառավարութիւնը բնակարար ոչ միայն չի կամենում միջնորդ լինել, հաշտեցնել Սուլթանին ոչ-պաշտօնական Գերմանիայի հետ, այլ ընհակառակը, սուշադրութեամբ հետևում է Աբդուլ-Համիդի տրամադրութեանը, միշտ պատրաստ նորա հետ միասին, «առանց սեփական կարծիքի», յարձակւելու նորան բարկացողների վրայ և գուրգուրելու նորա սիրելիներին։

Ոմանք ասում են, որ գերման կառավարութիւնը գաղտնի կերպով շատ է համակրում Հիլֆսբունդ'ին, ի հարկէ, ոչ թէ սորա մարդասիրական գործունէութեան պատճառով, այլ այն մեծ ծառայութեան համար, որը «Օգնութեան միութիւնը» կարող է անել Գերմանիայի ապագայ շահերի համար Տաճկաստանում, ինչպէս գաղութային այնպէս և ելեմտական շահերի տեսակէտից։ Սա անկարելի չէ։ Ընդհակա-

ռակը, հաւանական է, որ գերմանական հեռատես քաղաքագէտները լաւ հասկանում են, որ 2,000 հայ որբերի դաստիս բակութիւնը գերմանացիների միջոցով չնչին բան չէ Գերմանիայի արևելեան նպատակների համար. դիցուք մինչև անգամ, որ Բերլինի կառավարութիւնը չի բաւականանում միայն բարոյական համակրանքով, այլ և գործնականապէս օգնում է Հիլֆսբունդ'ին. բայց այս բոլորի ենթադրութիւնները, լինին նոքա ճիշդ թէ սխալ. *այստեղ* մեզ համար ոչ մի նշանակութիւն չունին. մեզ հետաքրքրում է դաւանական հարցը, և յայտնի է, որ Հիլֆսբունդ'ի վրայ գերման կիսապաշտօնական և անկախ մամուլի կողմից յարձակումներ են եղել, պախարակումներով, որ նա զբաղւում է դաւանափոխական գործերով։ Այդ յարձակումները կարող են կեղծաւոր կամ անկեղծ լինել. դորա պարզաբանութեամբ չպէտք է այստեղ զբաղւել։ Այդ յարձակումները մեզ պիտի հետաքրքրեն այստեղ, ինպէս մի Փաքտ, մի երևոյթ, որը *պատահել* է, և պիտի միայն փորձել ստուգելու, որքան այդ բողոքները համապատասխանում են *իրականութեանը*. ինչպէս ասել ենք, այդ կարելի է մասամբ պարզել Հիլֆսբունդ'ի և ուրիշների տուած պատասխաններից։

1896 թւին, երբ եւրոպական և ամերիկական ընկերութիւնները դիմեցին Բարձրագոյն Դռան, որ նոցա թոյլ տրւի սովեալ և վիրաւորուած հայերին և մանաւանդ որբերին օգնութիւն հասցնելու, Բ. Դուռը նախ չհամաձայնեց, բայց վերջը թոյլ տւեց, միայն մի պայմանով, որ այդ օգնութիւնը լոկ մարդասիրական լինի, առանց որ և է քաղաքական կամ դաւանական յետին մտքերի։ Անցաւ հազիւ մի երկու տարի, և գերմանական մի երկու թերթերի մէջ սկսեցին երևան գալ թղթակցութիւններ և յօդուածներ Հիլֆսբունդ'ի գործունէութեան մասին, գովասանքով և նկատողութիւնով, թէ Հիլֆսբունդ'ի գործը լաւ հիմք կարող է լինել ապագայ գերմանական գաղթականութիւնների համար Փոքր-Ասիայում։

Թէպէտ այս և սորա նման կշռադատութիւնները «Օգութեան միութիւնից» չէին արտայայտւում, ոչ անմիջապէս ոչ էլ անուղղակի կերպով նորա անդամների միջոցով, այլ յայտնւում էին բոլորովին կողմնակի անձերի կողմից, այնու ամենայնիւ, որովհետև վերոյիշեալ կարծիքը սկսեց աւելի յաճախ արտայայտւել մամուլի մէջ, գերմանական արտաքին գործոց նախարարութիւնը բաւականին խիստ լեզուով իւր կողմից հասկացրեց, որ գերման կառավարութիւնը այդ կարծիքների և «Օգնութեան միութեան» գործերի հետ ոչ մի կապ չունի. բացի այդ, անուղղակի կերպով նա հասկանալ տւեց ում որ հարկաւոր էր, թէ որ և է թիւրամացութիւնների դէպքում թիւրքաց կառավարութեան և Հիլֆսբունդ'ի մէջ, վերջինը չպէտք է սպասէ իւր կառավարութիւնից որ և է պաշտպանութիւն կամ միջնորդութիւն։

Բերլինի կենտրոնի տարեկան ժողովի արձանագրութեան մէջ, կարդում ենք ի միջի այլոց հետևեալ խօսքերը. «որովհետև «Օգնութեան միութեան» առաջարկած էր, ի նկատի առնելով քաղաքական հանգամանքները, Հիլֆսբունդ'ին ուրիշ անուն տալ, զանազան առաջարկութիւններ եղան, որոնց վերաբերմամբ մի ընդհանուր համաձայնութիւն ձեռք բերելը դեռ ևս չաջողւեց [37]։

Ինչպէս յետոյ մեն քիմացանք ճիշդ աղբիւրներից, այդ առաջարկութիւնը հետևեալն է եղել. Գերմանիայի արտաքին գործոց նախարարութիւնը առաջարկած էր «Գերմանական օգնութեան միութիւն Հայաստանի համար» (Deutscher Hilfsbund für Armenien) անւան մէջ, «օգնութիւն» բառի փոխարէն գործածել «միսսիոն» (=Mission) բառը, և «Հայաստան» կամ «Հայեր» բառերը ամենևին չլիշել։ Նախարարութիւնը առաջարկում էր Հիլֆսբունդ'ին իւր անունը դնել՝ «Գերմանական արևելեան միսսիոն» (Deutsche Orient-Mission)։ Այս անունը մերժւեց.

[37]) Aus der Arbeit d. arm Hilfswerks 1899 Aprl.

Հետաքրքրական է հետևեալ դէպքը, որ պատահել էր պաստոր Բրոկսի (Brockes)՝ «Օգնութեան միութեան» անդամներից մէկի հետ։ Այս դէպքը կբերենք այստեղ իբրև օրինակ, թէ որքան չնչին բաներ են առաթ տալիս գերման կառավարութեան յարձակելու գերմանական հայրենասէրների վրայ և մինչև ուր է հասնում գերման կառավարութեան պատրաստութիւնը կատարել առանց այլ և այլի Սուլթանի ոյս կամ այն հաճոյքը։ Անցնելով Զէյթունից, Բրոկսը ցանկացել էր այստեղ, լուսաւորչական մի եկեղեցում, առաւօտեան ժամերգութիւն կատարել. բայց այն րոպէին, երբ նա պատրաստւում էր գնալ եկեղեցին, մի սուրհանդակ գալիս է նորա մօտ և արգելում է ժամերգութիւնը։ Այս արգելքի պատճառը եղել է մի բառ, որը նա արտասանել էր նախընթաց օրւայ երեկոյեան ժամերգութեան ժամանակ։ Ինքը Բրոկսը այսպէս է պատմում. «Երեկոյեան ժամերգութեան ներկայ էր և մի ոստիկան կոմիսար. ես խօսում էի փրկութեան մասին (Ղուկաս I, 68). «փրկել» թիւրքերէն ասւում է «կուրմատայ», որը նշանակում է նաև «ազատել». կոմիսարը, որը ոչինչ չի հասկանում կրօնական գործերից, այնպէս է հասկանում, իբր թէ ես խօսում էի հայերի ազատութեան մասին տաճկական լծից։ Հետևեալ օրը վաղ առաւօտեան երբ դեռ մութ էր, նա շտապում է լուսաւորչական քահանայի մօտ և ասում՝ «օտարականը, որ այսօր քո եկեղեցում կամենում է քարոզ կարդալ, վտանգաւոր մարդ է, յեղափոխական է, որը ձեր ազգը կամենում է գրգռել, որպէս զի նա կառավարութիւնից անջատւի։ Ես արգելում եմ քեզ թոյլ տալ նորան խօսելու»։ Դորանից յետոյ քահանան ընդհատեց պատարագը, տուն ուղարկեց ժողովուրդը, փակեց եկեղեցու դռները և ուղարկեց ինձ վերոյիշեալ լուրը»[38]։ Այս դէպքի հետևանքը եղաւ, ինչպէս նկարագրում է «Berliner Tageblatt»-ի թղթ-

[38]) «Der Reichsbote» № 89, 1899.

թակիցը հետևեալը. Զէյթունի գալմագամը յայտնում է Հալէպի վալիին, իսկ վերջինը՝ Կ. Պոլիս. Բարձրագոյն Դուռն էլ իւր կողմից յայտնում է Կ. Պոլսի դեսպանին, խնդրելով նորա աջակցութիւնը, որպէս զի այսպիսի դէպքեր այլ ևս չպատահեն ապագայում։ Այդ միջոցին Բրոկսը վերադառնում է Զէյթունից Կ. Պոլիս, ուր դեսպանատունը նորանից բացատրութիւն է պահանջում։ Պաստորը բացատրում է, որ ինքը խօսելով փրկութեան մասին, ոչ մի քաղաքական դիտաւորութիւններ չէ ունեցել։ Դեսպանատունը այդ բացատրութիւնը Բ. Դրան գանգատի հետ միասին ուղարկեց Գերմանիայի արտաքին գործոց նախարարութեան։ «Դորա վերջը այն եղաւ, որ, *յանուն զեմանական և տաճկական կառավարութիւնների մէջ իշխող լաւ յարաբերութիւնների*, պաստոր Բրոկսը, համաձայն կայսերական հրամանի, պաշտօնազուրկ եղաւ, պատւէր ստանալով առանց յետաձգութեան վերադառնալ Գերմանիա»։ Թղթակիցը ինքը խոստովանում է, որ Ֆրանսիան կամ Անգլիան այսպիսի դէպքում Բ. Դրան դիմումներին ոչ մի ուշադրութիւն չէին ընծայի, բայց, աւելացնում է նա, դա միայն նորից կ'ապացուցանէր այդ պետութիւնների սխալ դիրքը (incorrecte Haltung) դէպի Թիւրքիան, և բացի այդ, նոցա վարմունքը Գերմանիայի համար օրինակ չէ [39])։

Բայց ամենանշանաւորն է գերմանական *կիսապաշտօնական թերթի* «Kölnische Zeitung»-ի արշաւանքը Հիլֆբրունդ'ի դէմ։ Նա օգտուեց իւր յարձակման մէջ ինչպէս պ. Բրոկս'ի հետ պատահած այս դէպքից, նոյնպէս և ս. պատրիարք Օրմանեանի յայտնի նամակից տաճկաց մեծ վեզիրին, որը գրուած է մօտաւորապէս նոյն ժամանակները։ Որովհետև ս. Օրմանեանի այս գրութիւնը մեծ թիւրիմացութիւնների պատճառ եղաւ, և «Օգն. միութեան» ինչպէս թշնամի-

[39]) Berl. Tageblatt» *ի յաւելուածի մէջ* «Der Zeitgeist» № 32, 1899,

ները նոյնպէս էլ համակրողները հիմնւում են նորա վրայ իրենց յարձակման և պաշտպանութեան ժամանակ, մենք կը բերենք այդ նամակից քաղւածքներ գլխաւոր կէտերի մասին [40]։ «Ես ստիպւած եմ, գրում է Օրմանեանը, դարձնել կառավարութեան ուշադրութիւնը մի դրութեան վրայ, որը վաղուց գոյութիւն ունի և այժմ վատացել է, և որը մեծ նշանակութիւն ունի մեր եկեղեցու և համայնքի համար...։ Բողոքական և կաթոլիկ միսսիոնարները գայթակղեցնում են հայերին, որոնք այժմ զրկւած են կենսական միջոցներից, պաշտպանութեան և օգնութեան զանազան խոստումներով, և հէնց Վան քաղաքում և նորա շուրջը ուր տիրում է ոչ միայն աղքատութիւն, այլ և սով, հայերին խոստացւած է եղած դրամ այն պայմանով, որ նոքա թողեն իրենց եկեղեցին, և անցնեն Հռոմի գիրկը, փոխեն թեսկերէ-ի-օսմանիէն, փոխեն ցուցակները... (Zu Rom ubergehen, ihr Teskeré-i-Osmanié wechseln, die Register ändern)... նոցա ասւած է եղել որ թոյլ կը տրւի նորանց ճամբորդելու երկրի մէջ և դրամ վաստակելու։ Այսպիսի խոստումներից դրդւած, յուսալով որ պաշտպանութիւն և օգնութիւն պիտի ստանան այն ազգերի կողմից, որոնց հպատակներն են դառնալու, խեղճ մարդիկը շնորհիւ Վանի միսսիոնարների ստիպւած են եղել անցնել հռոմայական եկեղեցին։ Այս դաւանափոխական գործիչները (Proselytenmacher), կամ, աւելի ճիշդն ասած, քաղաքական գործակալները (Agitatoren) իրենց քարոզութեան մի կենտրոն և եպիսկոպոսական աթոռ են հաստել, մտադրութիւն ունենալով իրենց գործունէութիւնը ընդլայնելու»։

Köln'sche Zeitung-ին կամ գերման կառավարութեանը ս. պատրիարքի հէնց այդ գանգատն էր հարկաւոր։ Լրագիրը տպեց իւր էջերում Օրմանեանի այդ ամբողջ գրու-

[40]) Զունենալով բնագիրը, թարգմանում ենք գերմաններէնից։

թիւնը և պ. Բրոկսի հետ պատահած յիշեալ դէպքի նկարագրութիւնը, աւելացնելով սոցա մի քանի հատու նկատողութիւններ Հիլֆսբունդ'ի հասցէին։ Այս յօդուածը խորագրուած է. «Proselytenmacherei in der Türkei»։ (Հաւատասրս գործունէութիւն Թիւրքիայում)։ Այս յօդուածի մասին գրեթէ բոլոր գերմանական թերթերը խօսեցին այս կամ այն մտքով։ Ոմանք արտատպեցին լիովին, ոմանք բաւականացան քաղուածքներով, ոմանք իրենց նկատողութիւններն էլ արին, մի խօսքով նա փոքր ի շատ աղմուկ հանեց, որովհետև ամենքի համար պարզ էր, որտեղից էր թելադրուած կիսապաշտօնական «Քէօլնիշէ Ցայտունգ»ի այդ յօդուածը. կամ Բերլինից արտաքին գործոց նախարարութիւնից, կամ էլ Կ. Պոլսից, գերմանական դեսպանատնից։ Հարկաւոր է փոքր ի շատէ ծանօթանալ այդ յօդուածի հետ, որպէս զի հասկանալի լինին նրա նկատմամբ յայտնած պատասխանները։

«Այդ կոմիտէները (Հիլֆսբունդ'ի), ասում է լրագիրը, չը բաւականացան գոյութիւն ունեցող կարգութիւնը մեղմացնելով և ամենաընդարձակ կերպով սկսեցին զբաղուել դաւանափոխական գործունէութեամբ. գերմանական տնտեսական և ազգային նշանաւոր շահերի համար ստեղծուում են այդ հանգամանքից ծանր վտանգներ, որոնց վրայ չի կարելի ուշադրութիւն չը դարձնել, որովհետև անգլիացիք և ամերիկացիք առանձին հաճոյքով օգտուում են ամեն մի դէպքից տաճկական պաշտօնական շրջաններում կասկածանքներ արթնացնելու գերմանական անշահասիրութեան և բարեկամութեան վրայ և Գերմանիայի նկատմամբ խորին տժգոյութիւն ծագեցնելու համար։ Ս. պատրիարք Օրմանեանի գրութեան թարգմանութիւնը, որը ինքնին ամեն բան պարզ ապացուցանում է, ուղարկուած է մեզ Կ. Պոլսի գերմանական շրջաններից, որոնք գուշակում են թէ միսսիոնարների վարմունքից մեծ վնասներ են հասնելու գերմանական շահերին Արևելքում»։ Լրագիրը ասում է, որ ս. պատրիարքի նամա-

կի հիման վրայ, Բ. Դուռը փակեց այն որբանոցները և բարեգործական հիմնարկութիւնները, որոնք կառուցած են եղել առանց նրա վաւերացման։ «Դորանով ապացուցուում է բաւականին», աւելացնում է նա, «թէ որքան սխալ էր հէնց սկզբից, կարօտ ազգաբնակութեան օգնութիւն բերել, առանց հաստատ իմանալու, թէ այդ օգնութեան գործին զօրեղապէս աջակցելու է արդեօք թիւրք կառավարութիւնը, թէ ոչ»։ Քէօլնիշէ Ցայտունգ'ը վերջացնում է խորհուրդ տալով, որ Հիլֆսբունդ'ի գործիչները հրաժաւեն հայկական օգնութիւնից և այն ահագին գումարները, որ նոքա հաւաքում են, գործադրեն Գերմանիայում, յօդուտ գերմանացիների. «մի փոխադրութիւն, որի հետ բոլոր դրամ նուիրողները, հաստատ է որ, համաձայն կը լինեն»։

Այսպիսի խորհուրդներ Հիլֆսբունդ'ը յաճախ է ստացել զանազան կողմերից, և միշտ միևնոյն հիման վրայ, այն է թէ «Օգն. միութիւնը» վնասում է գերմանական շահերին Արևելքում։ Այս պատճառաբանութեան աւելացնում են և ուրիշը, թէ դաւանափոխական գործը գարշելի բան է։ Միայն ծիծաղելին այն է, որ այս վերջին բարոյական պատճառաբանութիւնը բերում են հէնց նոքա, որոնք ամենացինիկ կերպով կրկնում են Բիսմարկի խօսքերը Արևելքի մասին և յիշեցնում են նորից ու նորից գերմանական ընթերցողին, թէ հարկաւոր է վերջապէս անգլիացիներից սովորել եսական քաղաքականութիւն գործադրելը, զբաղուելով միայն գերմանական շահերով և թողնելով ցնորամիտ մարդասիրական ձգտումները։ «Berliner Tageblatt»-ի Կ. Պոլսի թղթակիցը կամենալով ի հարկէ ազդել Հիլֆսբունդ'ի անդամների վրայ, մինչև անգամ հաւատացնում է, որ հայերը թէպէտ և արտաքին կերպով շնորհակալութեամբ են վերաբերուում գերմանական հայասէր գործիչներին, բայց իսկապէս, «սրտի խորքերում» նոքա կամ ծիծաղում են «յիմար» գերմանացիների վրայ, որոնք հայերի համար դրամ են ծախսում և «այդպէսով միջոց են

տալիս հարուստ հայերին խնայելու իրենց դրամը», և կամ բարկանում են, որ այդ գերմանացիները անջատում են հայ երեխաները հայրենական եկեղեցուց։ Թղթակցութեան վերջում այսպէս է ասում հեղինակը. «բայց... բայց ամբողջ այս հայ որբական գործի մէջ (Waisenwerk) մի ուրիշ բան էլ կայ, բացի լոկ մարդասիրութիւնից։ Բարեգործական դիմակի տակ ես տեսնում եմ հայրենասիրական շովինիզմ և մոլեռանդ դաւանափոխութիւն»։

Այս տեսակի են եղել առհասարակ գերմանական յարձակումները Հիլֆսբունդ'ի վրայ։ Այլ օրինակներ առաջ բերելը կը նշանակէր կրկնել նոյնը։ Այդ պատճառով այժմ ուզղակի կ'անցնենք այն հարցին, թէ ինչ պատասխաններ են տուել դրանց Հիլֆսբունդ'ի և ուրիշների կողմից։ Այս կէտի համար մենք, ի հարկէ, նոյնպէս կը շատանանք ցոյց տալով միայն ամենաբնորոշ և հետաքրքրական պատասխանները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ուրեմն մեզ հետաքրքրող հարցերը սոքա են. ա. արդեօք Հիլֆսբունդ'ը ձգտում է դաւանափոխ անել հայ որբիկներին և բ. ձգտում է արդեօք գերմանացնել նոցա։

Նախընթաց էջերում մենք առաջ բերինք նիւթեր այս հարցերին պատասխանելու համար. հիմնուելով նոցա վրայ և առհասարակ այս հարցերի վերաբերեալ բոլոր նիւթերի վրայ, որոնք ամբողջութեամբ բերել ի հարկէ անկարելի է [41]), կարծում ենք, որ սխալ չէ հետևեալ եզրակացութիւնը։

[41]) Հետաքրքրողի համար կ'բերենք գլխաւոր աղբիւրները «Mittheilungen aus d. Orient». 1899 № 4, էջ 27, № 5, էջ 34. № 9, էջ 73-74. «Das Reich Christi» 1899. ապրիլի յօդած «Deutsche Interessen im Orient». էջ 102. Նոյն թերթում, 1899, յուլիս, յօդած «Innere Missionskräfte».—Aus der Arbeit des armen. Hilfswerks» թերթում, 1898 նոյեմբեր, էջ 173. 1899 ապրիլ, էջ 43,

Այն ժամանակ, երբ Հիլֆսբունդ'ը սկսում էր փոքր առ փոքր կազմուել, նորա ձգտումները և գործունէութիւնը լոկ մարդասիրական էին—սովեալներին հաց բաժանել, կանանց և որբերին ապաստարան տալ, աւերուած գիւղերում, դրամ, շորեղէն, սերմ բաժանել. ահա ինչումն էր կայանում նոր ըստեղծուած ընկերութեան գործունէութիւնը։ Նոյն իսկ այն ժամանակ, այսինքն 1896 թ. հրատարակուած թռուցիկ և այլ թերթերը լոկ մարդասիրական ոգովն են ներշնչուած. Այս մարդասիրական ձգտումներին ժամանակի ընթացքում միացան, նախ, կրօնական ձգտումներ, և յետոյ՝ «արդարացում» քաղաքական տեսակէտից (ոչ՝ քաղաքական շահեր). ուրեմն Հիլֆսբունդ'ի ձգտումների զարգացումը կարելի է այսպէս ներկայացնել.

1 մարդասիրական 2 { մարդասիրական, կրօնական } 3 { մարդասիրական, կրօնական, քաղաքական (արդարացում) }

Սկսենք մարդասիրական ձգտումներից։ Շատ մեծ սխալ կ'լինէր ասել թէ «անկարելի բան է, որ Հիլֆսբունդ'ը ու-

---

սեպտեմբեր, էջ 128։ Պետոյ անհրաժեշտ է յիշել «Christliche Welt» թերթից բրոշիւրով արտատպած պ. Ռոռբախի շահեկան յօդուածը «Was müssen wir bei der Arbeit für die Armenier berücksichtigen?» (=«Գործելով յօգուտ հայերի մենք ինչ ի նկատի պիտի ունենանք»)։ Յօդուածագիրը մատնանիշ է անում հայոց եկեղեցու վերանորոգման ներքին և արտաքին դժուարութիւնների վրայ։ Վերջապէս պաստոր Բորոկէսի (Brockes) փոքրիկ յօդուածը—«Die gregorianische Kirche und des Evangelium» տպած պաստոր Լոհմանի կրօնական թերթերից մէկում—«Der Freiwillige», (=Կամաւորը) 1899. № 10, և նորերումս եբևան եկած պատմական տեսակէտից գր. Լեպսիուսի շատ շահեկան յօդուածը, նորա նոր ամսաթերթում «Der Christliche Orient» 1900 յունուար-փետուր։ Կարելի է յիշել և թռուցիկ թերթը 1897 թ. «Deutsche Orient Mission», որը լոյս է սփռում այն հարցի վրայ, թէ ինչ կապ ունի «հայերին օժանդակելու գործը» գերմանական արևելեան միսիոնի ընդհանուր ձգտումների հետ։

նենաց կամ ունենար լոկ մարդասիրական նպատակներ առանց այս կամ այն եսական շահերի խառնուրդի»։ Մենք, հայերս, ինչպէս ուրիշ փոքր ազգերը, ամեն կողմից շահագործուած լինելով, մտնելով ամեն մի նոր յարաբերութեան մէջ օտարների հետ, ակամայ a priori սկսում ենք կասկածել, չ'լինի այս անգամ էլ կամենում են մեզ խաբել, շահագործել։ Timeo Danaos et dona ferentes, մտածում ենք մենք։ Բացի այդ՝ մենք, ինչպէս և ամեն մի փոքր ազգ, ունենալով անթիւ սեփական ցաւեր, չենք կարող ըմբռնել, թէ ինչպէս կարելի է, որ գտնուին մարդիկ, որոնք իրենց ամբողջ կեանքը նուիրեն այնպիսի մի եսազուրկ գործի ինչպիսին է մի օտար և անյայտ ազգի օգնութիւնը։ Չ'պիտի մոռանալ, որ իւր սահմանի ազգին ու հայրենիքին ծառայելու անհրաժեշտութիւնը, որպէս բարոյական պարտք, չի զգացւում մեծ ազգերի մէջ այնքան ուժեղ կերպով, ինչպէս փոքր ազգերի մէջ։ Վերջիններին համար ամեն մի անհատի թէ ֆիզիքական և թէ կուլտուրական կորուստը շատ զգալի է. և նա, ով նուիրւում է մի օտարի գործի, նկատւում է գրեթէ ինչպէս դասալիք։ Եւրոպական կեանքը ընթանում է համեմատաբար այնպիսի բնական կերպով, նա ունի այնքան հսկողները և պատասխանատուները, որ շատ բնական է, որ գտնւում են այստեղ մի քանի մարդիկ, որոնք մի օտար բայց անհամեմատ անբախտ ազգութեան տառապանքների տպաւորութեան տակ, մի մեծ գործ են սկսում, որի նպատակն է այդ ազգին փոքր ինչ օգնել. բնական է նոյնպէս, որ լիսուն միլիոնաւոր ազգի մէջ գտնուեցան հազարներ որոնք պատրաստ եղան նիւթապէս օգնելու այդ գործին։ Ուրեմ Հիլֆերդինգ'ի օգնութեան գործը չպիտի անպատճառ կեղծաւոր, շահագործական լինի. կարելի է միայն կասկածել և կասկածելով հարկաւոր է փորձել, a posteriori ապացուցանել այդ. և մենք կարող ենք ասել, որ Հիլֆերդինգ'ի գործունէութեան ուսումնասիրումը և հէնց այն

հանգանանքը, որ նորա ծախսած գումարից մեծ մասը գնացել է ոչ թէ որբանոցների և ուսումնարանների, այլ անմիջական օգնութեան վրայ (հացի, սերմի, շորեղէնի և գործիքների վրայ), ցոյց է տալիս, որ լոկ մարդասիրական ձգտումները, Հիլֆսբունդ'ի ուրիշ ձգտումների թւի մէջ, ըսկզբից մինչև այսօր միշտ մեծ դեր են խաղացել։

Ճիշդ է, կայ մի հանգամանք, որը ակամայ կարող է a priori կասկածանքների տեղի տալ։ Ինչ է եղել պատճառը, որ մարդասիրութեան խօսուն գործը սկսեցին և անում են *հոգեւորականները*, այլ ոչ թէ *աշխարհականները*։ Պատահական է այդ երեւոյթը, թէ չէ։ Ոչ, պատահական չէ, և այդ ունի իւր պատճառները, որ կարելի է բացատրել։

Մինչև հայկական կոտորածները 1894—96 թ. գերմանացիք գրեթէ չգիտէին ինչ է «Armenier» (հայ) խօսքը. արդէն չեմ ասում որ ոչ ոք գաղափար չունէր թէ ուր են ապրում հայերը։ Կոտորածների ժամանակ, երբ գերման հասարակութիւնը լրագրական հեռագիրների շնորհիւ դեռ նոր էր սկսում ծանօթանալ հայերի հետ, գերման հոգեւորականները արդէն բաւականի բան գիտէին հայերի մասին։ Չ'պէտք է մոռանալ որ գերման ժողովրդի քաղաքական ուշադրութիւնը միշտ գրաւած է եղել ներքին, գերմանական հարցերով, գերմանական իշխանութիւնների յարաբերութիւններով։ Երբ այդ անկախ պետութիւնները, Բիսմարկի օրերով, կազմեցին մի ընդհանուր մարմին, կայսրութիւն, այն ժամանակ ժողովուրդը, հոգեբանօրէն ու քաղաքականօրէն շատ բնական կերպով, սկսեց հետաքրքրւել նա և արտաքին քաղաքականութեան հարցերով։ Սակայն այդ արտաքին հարցերը դեռ կրում էին զուտ եւրոպական բնաւորութիւն, և այն լայն-համաշխարհային քաղաքականութիւնը, որը այժմ Վիլհելմ II այնպիսի յաջողութեամբ տանում է, երկար պատմութիւն չունի, գուցէ միայն երկու տասնեակ տարիներ։ Մի ժողովրդի համար դա շատ քիչ է, և հասկանա-

լի է, որ գերման հասարակութիւնը ոչ միայն հայերի, այլ առհասարակ Եւրոպայից դուրս բնակուող ազգերի մասին շատ թերի տեղեկութիւններ ունի։ Այս կէտում հոգևորականները աւելի շատ գիտեն քան թէ հասարակ աշխարհական քաղաքացիք։ Թէ շնորհիւ եկեղեցական պատմութեան, որը ամենն մի հոգևորական ուսումնասիրել է, և թէ ներկայիս Արևելքում տեղի ունեցող կրօնական մրցման շնորհիւ, հայերի ինչ լինելը նոցա փոքր ի շատէ պիտի ծանօթ լինէր։ Ամբողջ բողոքը, որ բարձրացրին գերմանացոց պատտորները կոտորածների դէմ, շեշտւում էր այն գլխաւոր հանգամանքով, որ «կոտորւած են քրիստոնեաներ»։ Կարելի է հաստատ ասել, որ եթէ հայերը քրիստոնեայ չ'լինէին, այն բողոքը, այն ժողովները, որոնք տեղի ունեցան կոտորածների ժամանակ հայերի օգտին, (արդարութիւնը պահանջում է աւելացնել — և *միայն* շնորհիւ գերման պատտորների) — ամենևին գոյութիւն չէին ունենալու։

Գալով կրօնական շահերին, պիտի նկատենք, որ այն ինչ որ մենք այստեղ «շահեր» ենք անւանում, չեն կարող «շահեր» ասւել այն մտքով, ինչպէս այդ հասկացւում է, երբ ասում ենք «կաթոլիկական շահեր», «քաղաքական շահեր» և այլն։ Չեմ կարծում, որ բողոքական եկեղեցին կարողանայ ունենալ որ և է շահեր, որովհետև նա կազմակերպւած մի մարմին չէ, որը ունենար իր սեփական քաղաքական կեանքը, ինչպէս, օրինակ, կաթոլիկ եկեղեցին, որի ներկայացուցիչները ամեն տեղ պաշտպանում են իրենց հին բները և պատրաստում նորերը յանուն կաթոլիկ եկեղեցու, *որպէս կազմակերպութեան*։ Բողոքականութիւնը անհատական է։ Բողոքական եկեղեցու միսսիոնարները, լինեն նոքա ամերիկացիք, թէ գերմանացիք, նիւրւում են իրենց գործին, հետևելով լոկ *անձնական* հակումներին, սեփական հաւատին և համոզմունքներին։ Բնաւ զարմանալի չէ, եթէ գերմանացի բողոքական պատտորների մէջ գըտն-

ւում են ոմանք, որոնք, խիստ համոզուած լինելով իրենց դաւանութեան ամենաբարձր լինելուն, ձգտել են տարածելու այդ դաւանութեան սկզբունքները ոչ-բողոքական ժողովուրդների մէջ՝ քրիստոնէական և ոչ-քրիստոնէական։

Սակայն այդ քարոզը մի եկեղեցական մարմնի ծրագրի իրագործումը չէ, այլ, կրկնում եմ, հետևանք անձնական ձգտումների։ Գերմանական, կամ ամերիկական միսսիոնարները, այդ քարոզով ելք են տալիս իրենց կրօնական ոգևորութեան, անձնական ձգտումին, այն է եղբայրական ծառայութիւն մատուցանել այդ ծառայութեան ամենակարօտներին։ Նոքա ծառայում են իրենց իդէալներին։ Այդ իդէալները կարելի է քննադատութեան ենթարկել, բայց իդէալները նոցա սեփական իդէալներն են, և նոքա ծառայում են նրանց անկեղծօրէն, և միայն նոցա, այլ ոչ թէ իրենց երկրի քաղաքական կամ ուրիշ շահերին։ Բողոքական քարոզը կարող է միևնոյն ժամանակ շատ նպաստիչ հանդիսանալ, օրինակ, Գերմանիայի պետական արևելեան ծրագիրներին, բայց բողոքական միսսիոնարները (կարող են լինել ի հարկ է բացառութիւններ) զիտակցօրէն իրենց գործունէութիւնը չեն յարմարեցնում այդ ծրագրին։ Այդպէս չէ կաթոլիկների միջև։ Ճիշդ է, սոքա էլ շատ քիչ են հետաքրքրւում քաղաքական հարցերով, բայց հէնց այն պատճառով, որ ունին մի ընդհանուր եւ միակ հայրենիք — կաթոլիկ եկեղեցու ահաւոր կազմակերպութիւնը իւր մայր աթոռով — Վատիկանը։ Ցանուն այդ քահանայական կազմակերպութեան հազարաւոր կաթոլիկ միսսիոնարներ, կամայ և յաճախ ակամայ, այսինքն առանց ներքին կոչման, աշխարհիս բոլոր կէտերում պապական քարոզ են անում [43]։

---

[43]) Մի նշանաւոր ֆրանսիական հեղինակ, (ինչպէս երևում է չափազանց մոլեռանդ կաթոլիկ) հաւատացնում է, որ կաթոլիկ միսսիոնարները Արևելքում անձնուէր են իրենց գործին, իսկ բողոքականները սարսափելի եսամոլ։ Այս համեմատութիւնը դժուար ընդու-

Աւետարանականութեան և կաթոլիկութեան դրդիչ հանգամանքների զանազանութիւն շատ մեծ նշանակութիւն ունի, որովհետև արտայայտւում է ոչ թէ միայն նոցա նպատակների և հետևանքների այլ և քարոզի ձևերի վրայ։

Ովքեր են, օրինակ, Հիլֆսբուռնդ'ի գործիչները։ Մարդիկ, որոնք, կրկնում ենք, ոգևորուած են երկու գաղափարով—տարածել մաքուր կրօնը (բողոքականութիւնը) և «մաքրել» քրիստոնէական գործերով։ Հայ ընթերցողի մէջ, այս խօսքերը կասկածանքի և հեգնութեան ժպիտ կարող են յառաջ բերել։ Նորա համար անհաւատալի է, որ գտնւում են Եւրոպայում լուրջ մարդիկ, որոնք կարող են յափշտակւել այդպիսի ձգտումներով. այստեղ անպատճառ պիտի մի լեռին նպատակ լինի։

Բայց գիտնալու է մի բան—և հարկաւոր է դորա վրայ մատնանիշ անել, ոչ թէ Հիլֆսբուռնդ'ը արդարացնելու նպատակով, այլ որպէս զի Հիլֆսբուռնդ'ի երևան գալը մեզ համար որքան հնար է, բազմակողմանի հասկանալի դարձնելու համար,—որ մեզ, հայերիս անհասկանալի են մի շարք ձգտումներ, որոնք սովորական երևոյթ են ուրիշի և մանաւանդ եւրոպական ազգերի մէջ։ Յայտնի է, որ մենք, հայերս, ոչ անգիտակցաբար, ոչ էլ գիտակցաբար շատ կրօնասէր չենք։ Կրօնական հետաքրքրութիւնը պակասում է մեզ [44]։ Գիտակցական հաւատ, այսինքն հաւատ, որը հիմն-

---

նելի է, որովհետև անկասկած նոքա, (այսինքն բողոքականները), որոնք նուիրում են մի գործի, հետեւելով անձնական կոչման և որոշ գաղափարի, պէտք որ աւելի անձնուէր լինին, քան թէ «պաշտօնական» միսիոնարները—կաթոլիկները։ Այդ կարելի է ընդունել միայն այն մտքով, որ կաթոլիկները աւելի մեծ անձնական զոհեր են բերում իրենց պապին, քան թէ բողոքականները, որոնց զոհաբերութիւնների սեղանը—իրենց սեփական համողմունքներն են» (La France du Levant, par Etienne Lamy Revue des Deux Mondes 15 սեպտ. 1899. էջ 925—26)։

[44]) Այս երևոյթը լիշում ենք լոկ որպէս փաքտ, այլ ոչ իբրև պախարակելի կամ գովելի յատկութիւն։

ւած է՝ ոչ թէ միայն զգացումների այլ և մի ամբողջ փիլիսոփայական հայեցողութեան վրայ, մենք չունինք։ Իսկ նայեցէք Եւրոպայում. այստեղ, թէ կաթոլիկութիւնը և թէ բողոքականութիւնը ունին իրենց անթիւ փիլիսոփայական սիստեմները, որոնք անդադար երևան են գալիս՝ իսկզբանէ մինչև այսօր ձգտելով մրցել դրական, փիլիսոփայութեան հետ. այն տհաւոր ճիգը, որը դրել է դրական, գիտնական փիլիսոփայութիւնը կրօնական սիստեմները տապալելու համար, արդէն ապացուցանում են, որքան ուժեղ են այս սիստեմները. քրիստոնէական դարերի մեծ փիլիսոփաները, թէիստները թէ աթէիստները, մատերիալիստները թէ սպիրտուալիստները, զբաղուել են ամենալուրջ կերպով ոչ թէ միայն կրօնական, այլ և դաւանական հարցերով։ Կաթոլիկ և բողոքական պրոֆեսսոր-աստուածաբանները շատ լաճախ վիճում են փիլիսոփայական հողի վրայ, և ոչ թէ միայն «որովհետև ըստ Ղուկասու այսպէս կամ այնպէս է» և այլն։ Զարմանալի չէ, ուրեմն, եթէ գտնուում են մարդիկ, որոնց մէջ խոր արմատացած կրօնական զգացմունքները համերաշխ ապրում են իրենց մտքի բարձր ուսման և զարգացման հետ։ Այս կէտը հարկաւոր է ի նկատի ունենալ, որպէս զի չըկարծուի, որ եթէ եւրոպական մտքով զարգացած մարդ ի սրտէ նւիրւում է այնպիսի մի գործի, ինչպիսին է՝ Աւետարանը բացատրել անուսում և ծէսերի մէջ խեղդուած մի ժողովրդի, *պէտք է անպատճառ* այդ ձգտումների դիմակի տակ ուրիշ պատճառներ որոնել, լինի այդ քաղաքական կամ եսամոլ-կղերական։

Ամեն թիւրամացութիւններից խոյս տալու համար, խօսենք միայն Հիլֆսբունդ'ի վրայ։ Բացի մարդասիրական նպատակներից, Հիլֆսբունդ'ը, ասացինք, ունի և կրօնական շահերը, բացատրելով, որ «շահերի» փոխարէն աւելի ճիշդ կ'լինէր ասել «ձգտումներ»։ Մենք ցոյց տւինք, թէ ինչումն է կայանում զանազանութիւնը Հիլֆսբունդ'ի կրօնական ձրգ-

տումների և կաթոլիկ շահերի մէջև, և ասացինք, որ այդ զանազանութիւնը ազդում է և քարոզի ձևերի վրայ։

Յայտնի է, որ լուսաւորչականը, կաթոլիկ դառնալով չի կարող կաթոլիկ դառնալ փոքր առ փոքր, այլ ընդունելով կաթոլիկութիւնը, միևնոյն ժամանակ ընդ միշտ կտրում է իւր յարաբերութիւնները լուսաւորչական եկեղեցու հետ. կարելի է ասել և աւելին, որ նա կիսով չափ կտրում է իւր նախկին յարաբերութիւնները և ազգային շահերի ու ցաւերի հետ, որովհետև այնուհետև նորա համար առաջին տեղը արդէն բռնում է պապը, և յետոյ ազգը։ Կաթոլիկ միսսիոնարների գործունէութիւնը Արևելքում կայանում է նորանում, որ մի կողմից նոքա խլում են որ և է եկեղեցուն պատկանող անձ, կաթոլիկ դարձնելով նորան, և միւս կողմից ամեն միջոցներով աշխատում են տկարացնել այդ եկեղեցին։ Հիլֆսբունդ'ի բողոքական գործիչները իրենց աւետարանական քարոզութեան մէջ չեն ձգտում խլել հայերին իրենց մայր-եկեղեցուց, այլ, ինչպէս նոքա հաւատացնում են մեր առաջ բերած գրութիւնների մէջ, ընդհակառակը ուժեղացնել այդ եկեղեցին, որպէս զի նա աւելի յաջողակ կերպով կարողանամրցել ուրիշ հարևան եկեղեցիների հետ մի կողմից, և միւս կողմից—առաջն առնէ հայերի մէջ ծարաւող անհաւատութեանը։ Այդ երկու նպատակին կարելի է հասնել միայն լուսաւորչական եկեղեցու աստիճանաբար վերանորոգման ճանապարհով։ Լուսաւորչական եկեղեցին չի ընթացել զուգընթացաբար մարդկային կեանքի անընդհատ զարգացման հետ։ Նա խրել է ծեսերի մէջ. ձևականութիւնը խեղդում է հաւատը. անհրաժեշտ է մաքուր կրօնի ճառագայթները դարձնել նորա վրայ, որպէս զի նրա մէջ արթնանայ ըստ Աւետարանի իսկական հաւատի պահանջը, որպէս զի հաւատը գիտակցական դառնայ, և այլն։ Այդպէս են մտածում Հիլֆսբունդ'ի գործիչները։ Բայց ասում են նոքա, ինչպէս անել, որ վերջը, ծառայած լինելու փոխարէն՝ դուրս չգայ, որ

գործեցին ի վնաս հայոց ազգի։ Ի նկատի առնելով այն նշանակութիւնը, որ հայոց եկեղեցին ունի հայերի համար, պիտի խուսափեն ամեն մի հանգամանքից, որը կարող կ'լինի թուլացնել այդ եկեղեցին։ Բողոքական դարձնելով որ և է լուսաւորչականի և ուրիշներին այդպիսով հաւատափոխութեան օրինակ տալով, կ'նշանակէ գիտակցաբար նպաստել այդ վտանգին։ Ի՞նչ անել։ Այս հարցի վրայ, որը յաճախ դրական կերպով գրուած է եղել, զանազան պատասխանները յառաջ եկան. սոցա բոլորի ընդհանուր գաղափարը սա է. *հարկաւոր է վերանորոգել հայոց եկեղեցին, ոչ թէ արտաքին այլ ներքին ճանապարհով, այսինքն այնպէս դաստիարակել հայ երեխաներին (ներկայումս—որքերին), որպէս զի նոքա մեծանալով նկատեն իրենց մայր եկեղեցու պակասութիւնները եւ աշխատեն հեռացնել նոցա, գործելով այդ հարցում աւետարանական ուղղութեամբ։*

Ուրեմն Հիլֆոբունդ'ը ցանկանում է, որ հայոց եկեղեցին *վերանորոգուի հայերի միջոցով, և ոչ թէ քանդուի օտարների ձեռքով։* Այժմ տեսնում է ընթերցողը, որ այն հակասութիւնները, որ ամեն մի քայլափոխում պատահում էինք միսիոնարների նամակների մէջ, իսկապէս հակասութիւններ չեն և գեղեցիկ կերպով ներդաշնակում են։ Մի կողմից Հիլֆոբունդ'ի աշխատակիցները ելք են տալիս իրենց կրօնական քարոզի ծարաւին, միւս կողմից աշխատում են յարմարացնել իրենց գործունէութիւնը հայերի շահերին. և *բողոքական միսիոնարներից* բղխած այս նախադասութիւնը թէ «մենք զգում ենք դէպի լուսաւորչական եկեղեցին ջերմ սէր և ցանկանում ենք նորան ամենաբարձր զարգացում» —այդ խօսքը կեղծաւորութիւն չէ։

Հիլֆոբունդ'ի ծրագիրը սքանչելի է և մեզ մնում է հաւատալ, որ նա անարատ կերպով գործադրում է այդ ծրագիրը, մեզ մնում է նոյնպէս յուսալ, որ Հիլֆոբունդ'ը ապագայում, երբ նորան կը միանան նոր մարդիկ և կը հեռա-

նան հիները, և մի անգամ ընդունուած ազնիւ սկզբունքը կը մնայ անփոփոխ [45]։ Կարծում եմ որ աւելորդ չէ բերել այստեղ այն խօսքերը, որ պ. Էրնստ Լոհմանը, հարաւային կոմիտէների նախագահը, գրել է մեզ. որպէս պատասխան բողոքական քարոզի հարցին։ [46])

«Կարող եմ ձեզ հաւատացնել, որ մենք բոլորովին հեռու ենք հայկական եկեղեցու մէջ բողոքականութիւն քարոզելու մտքից։ Երբ ես հեռանում էի Հայաստանից [47]), մի ծեր հայ քահանայ, որի հետ միասին գործած եմ տառապեալների համար, ասաց ինձ. «Ուղարկեցէք մեզ Աւետարանի քարոզիչները, որպէս զի նոքա տարածեն verkünden—հրաչակեն) Աւետարան հայոց եկեղեցու մէջ (նստրը բնագրումն է). Եթէ հայկական եկեղեցին ցանկանում է ուժեղ լինել, նա պիտի ներշնչուի ոգեկան ոյժերով։ Որ և է մեռած եկեղեցի, որը հեռանում է միայն արտաքին ձևերի—ոյժ չունէ...։ Ես չեմ սպասում, որ մեր որբանոցներում դաստիարակուող երեխաները անցնեն բողոքական եկեղեցին։ Բայց ես խնդրում եմ Աստուծուց, որ, որ նա շինէ նոցանից մաքուր և իսկական քրիստոնեաներ, որոնք հանդիսանան որպէս լոյս և աղ իրենց ժողովրդի և եկեղեցու մէջ։ Ուրեմն թոյլ տուէք մեզ միասին գործել յօգուտ ձեր խեղճ ազգի» [48])։

[45]) Մեր արած եզրակացութիւնները վերաբերում են ներկայ գրութեան և ի հարկէ չեն կարող պատասխանատու լինել ապագայի համար։

[46]) Յունուարի 18, 1900։ Հեղինակը տուել է մեզ առաջ բերած տողերի հրատարակութեան թոյլատրութիւնը։

[47]) Անցեալ տարի հեղինակը ճանապարհորդել է Ցաճկա-Հայաստանում։

[48]) Մի քանի ամիս սորանից առաջ կայացաւ Բերլինում Հիլֆսբունդ'ի ընդհանուր ժողովը։ Միչեալ Դր. Ռոռբաիր շեշտում էր որբանոցների քաղաքական նշանակութեան վրայ, ցանկանալով երեի աւելի շահագրգռել ունկնդիրներին, որպէս զի նոքա աւելի աջակցեն այդ գործին։ Դր. Լեպսիուսը իւր ճառի մէջ, ասում են, նկատեց, որ «հայերին օգնելու միութիւն» քիչ է հետաքրքրում այն

Այսքանը՝ դաւանափոխութեան մասին։ Ինչ՞վերաբերում է հայերի գերմանացմանը, օրինակ, ի նպաստ քաղաքական շահերի, Հիլֆսբունդ՝ը հիմնելու օրից, սկզբունքով որոշել էր – ոչ մի քաղաքական գոյն չտալ «օգնութեան միութեան»։ Բացի այդ, չեմ պատահած, որ հայ որբերին գերմանացնելու հարցը որևէ տեղ շոշափուած լինի, այնպէս որ դժուար ընդունելի է որ այդպիսի ձգտում գոյութիւն ունենայ, մանաւանդ որ «Օգնութեան միութեան» աշխատակիցները ամեն քայլափոխում կրկնում են, որ նոցա նպատակն է, կրթել հայ զաւակները, «ինչպէս հայեր»։ Այդ տեսակէտից, որբերի մեծագոյն մասի համար կարելի է հանգիստ լինել, որովհետև նոցա միայն սկզբնական ուսում տալով և սովորեցնելով մի որևէ արուեստ, հէնց որ երեխաները հասնում են այն հասակին, երբ կարող են դրամ աշխատել և հոգալ սեփական ապրուստը, Հիլֆսբունդը աշխատում է անմիջապէս արձակել նոցա որբանոցներից և ղրկել գիւղերը, այնպէս որ ինչ ոգով էլ դաստիարակուած լինեն երեխաները որբանոցներում, ընդ միշտ վերադառնալով գիւղերը՝ նոքա նորից պիտի հայերդառնան և մնան։ Մի փոքր վտանգ սպառնում է այն երեխաներին, որոնք նկատւում են որպէս արժանի «բարձր» ուսման։ Օտարացումը յաջողւում է դպրոցներում, երբ նոցա դասատուութիւնը հիմնւում է օտար գրականութեան վրայ և տեւում է երկար տարիները։ Եթէ Հիլֆսբունդ՝ը չհոգաց հայկական առարկաների դասատուութեան մասին յիշեալ փոքրամասնութեան համար, ու չի գտնի արժանի հայ ուսուցիչներ, որոնք կարողանային զուգընթացութիւն պահպանել գերմանական դասատուների հետ, այն ժամանակ Հիլֆսբունդ՝ը անգիտակցօրէն փոքր ի շատէ կ՚օտարացնէ որբերին, մոցնե.

հարցով՝ օգուտ թէ վնաս է բերում նա Գերմանիայի պետական շահերին. նա կատարում է միայն իւր քրիստոնէական պարտականութիւնը։

լով նրանց թարմ լիշողութեան մէջ գերմանական տպաւորութիւններ։ Բնական է, որ մեզ համար միևնոյն չի կարող լինել, թէ արդեօք մի քանի հարիւր երեխաներ, փոքր ի շատէ հիմնական ուսում և դաստիարակութիւն ստանալուց յետոյ, մտնելով կեանքի մէջ, օտար կը լինեն իրենց ազգութեան, թէ ոչ։ Դոցա թէ կորուստը, և թէ պահուստը չի կարող զգալի չը լինել մեր հասարակութեան համար։

Սկզբից մենք նկատեցինք, որ ժամանակի ընթացքում Հիլֆսբունդ'ի ձգտումներին միացան և քաղաքական ոչ թէ «շահեր», այլ «արդարացում»։ Այո, «Օգնութեան Միութեան» կողմից ոչ մի ժամանակ ասուած չէ եղել, որ իւր արևելեան հիմնարկութիւններով նա կը ձգտի նպաստել Գերմանիայի կառավարութեան քաղաքական շահերին։ Ինչպէս յիշեցինք սկզբունքով քաղաքական նպատակները արտաքսուած են «Օգնութեան Միութեան» ծրագրից։ «Քաղաքական արդարացումի» մասին խօսք եղել է պոլեմիկայի ժամանակ։ Հիլֆսբունդի անդամների կողմից արտայայտուած է եղած, որ Հիլֆսբունդ'ը ոչ միայն ոչ մի վնաս չէ բերում գերմանական քաղաքականութեանը Տաճկաստանում, այլ ուղղակի մեծ օգուտ. և, որքան մեզ յայտնի է, միայն դոքտոր Ռոռբախն է եղել (նա Հիլֆսբունդ'ի գործող մարմնին չէ պատկանում), որը դրական կերպով զբաղուել է այն հարցով, թէ ինչ ծառայութիւն կարող են մատուցանել գերմանական որբանոցները Գերմանիայի արևելեան քաղաքականութեան։ Նորա կարծիքները վերև արդէն առաջ բերինք։

Այժմ, վերջին եզրակացութեան համար հարցնենք, թէ ինչ նշանակութիւն կարող են ունենալ մեզ համար գերմանական Հիլֆսբունդ'ը և նորա հիմնարկութիւնները։ Պատասխանելով դորան՝ ցոյց կ'տանք այն մինիմալ օգուտը, որ նա տուել է և կարող է տալ մեզ, եթէ մինչև անգամ նորա ներկայիս գործունէութիւնը այնպէս անմեզ չլինի, ինչպէս

իրանք նկարագրում են, և կամ եթէ նա ապագայում շեղուի իւր սկզբունքներից։

Ա. Նա շատ նպաստել է հայոց անուան ժողովրդականացմանը Գերմանիայում և միշտ պաշտպանել է և կ'պաշտպանի հայերին, երբ սոցա վրայ յարձակումներ են լինում մամուլի մէջ։

Բ. Նորա շնորհիւ հազարաւոր հայեր ազատուել են սովի մահից և մօտ 2,000 երեխաներ ապաստան են գտել։

Գ. Ինչ ոգով և դաստիարակուած լինեն այդ հայ որբիկները, ֆաքտ է, որ 2,000 երեխայ փոքր ի շատէ կանոնաւոր ուսում ու դաստիարակութիւն են ստանում և սովորում որոշ արհեստներ. և այդ այն ժամանակ, երբ կոտորածների առթիւ հայկական ուսումնարանները փակուեցան Տաճկաստանում։

Դ. Հիլֆսբունդ'ի հիմնարկութիւնները իրենց գոյութեամբ շատացնում են Եւրոպայի «գործակալների» թիւը Տաճկաստանում։ Ամերիկական, գերմանական, ֆրանսիական և այլ միսսիաները հանգիստանում են Թիւրքիայում ինչպէս Եւրոպայի, այնպէս ասած, ոչ պաշտօնական հիւպատոսներ. նոքա հանգիստանում են, որպէս ոչ պաշտօնական հսկողներ տաճկական կեանքի, գլխաւորապէս գաւառներում. կոտորածների և ուրիշ դէպքերի միջոցին նոքա հաղորդում են պատահածը Եւրոպային և մամուլը սկսում է խօսել։ Մինչև այժմ միայն գերմանական մամուլն էր, որ լռում էր այդ դէպքերում, այժմ բոլորովին ուրիշ է, և մի Լեպսիուսի, Լոհմանի, Բրոկէսի հաղորդագրութիւնները բարձր են գնահատւում գերմանական մամուլի մէջ։

Ե. Ինչպէս սկզբում ցոյց էինք տուել, Հայ որբիկները ունին գերմանական խնամակալներ՝ «ծնողներ»։ Այդ ծնողները լինում են ինչպէս առանձին անհատներ, անձնաւորութիւնների մի խումբ, նաև մի եկեղեցի կամ ընկերութիւն։ Պահելով իրանց հաշուով հայ երեխաներ, լինելով յաճախ

նոցա հետ նամակագրութեան մէջ, այդ «ծնողները» բնականաբար փոքր ի շատէ կապուում են իրենց «զաւակների» հետ և պիտի հետաքրքրուեն նոցա վիճակով, նոցա երկրի դրութիւնով, կեանքով և այլն։ Ուրեմն Հիլֆսբունդ'ի շնորհիւ Գերմանիայի հասարակութեան մէջ կան հազարներ, որոնց ուշադրութիւնը գրաւում են արևելքի դէպքերը և որոնք բարոյական տեսակէտից անտարբեր չեն կարող մնալ դէպի կոտորածները և ուրիշ տխուր անցքերը [48])։

Զ. Շնորհիւ Հիլֆսբունդ'ի դպրոցներին և բողոքականութեան՝ մեր եկեղեցին և ուսումնարանները, նոցա հետ մրցելու համար, ստիպուած կ'լինին վերանորոգուել և լաւանալ. այդ ապացուցին ամերիկական հիմնարկութիւնները։

Է. Վերջապէս, Հիլֆսբունդ'ի շնորհիւ նոր արգելք է ստեղծուում կաթոլիկութեան տարածմանը Հայաստանում։ Այն ծառայութիւնը միայն, որ կատարել են արդէն՝ ամերիկացիք, արժանի է արդէն որ յաջողութիւն ցանկանանք Հիլֆսբունդ'ին։

Շատ անգամ լսուում է, որ «Գերմանական Օգնութեան միութիւնը» արժանի չէ մեր շնորհակալութեան հէնց այն պատճառով, որ նորա գործունէութիւնը օգտաւէտ է նաև գերմանական շահերին (?!)։

Կրկնում ենք, Հիլֆսբունդը երևան է եկել, ինչպէս հետևանք մաքուր մարդասիրական ձգտումի — ազատել բա-

---

[48]) Թոյլ եմ տալիս ինձ, որպէս օրինակ, լիշատակել հետևեալ դէպքը։ Անցեալ տարի, ինձ անծանօթ մի գերմանացի, կարդալով նամակս Հիլֆսբունդ'ի օրգանի մէջ, գրեց ինձ մի բաց նամակ այն քաղաքի հասցէով, որը նշանակած էր տպած նամակիս վերջում։ Նա գրում էր, որ պահելով իւր հաշուով մի հաշ որը Հիլֆսբունդ'ի որբանոցի մէջ, նա շատ կ'ցանկանար տեսնել մի որ և է հալի հետ՝ աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար իւր «զաւակի» երկրի մասին, և որ այդ նպատակով նա մտադիր է այս ինչ օրը գալ այդ քաղաքը և տեսնուել ինձ հետ։

բոյական և ֆիզիկական վախճանից՝ կոտորածներից յետոյ մնացած որբերին։ Այդ ձգտումով ներշնչած է և նորա ներկայ գործունէութիւնը։ Անհերքելի է թէև, որ նորա գործիչներից ոմանք ոգևորւում են նաև կրօնական քարոզով, այն մտքով, ինչպէս ցոյց տուինք, իսկ ոմանք մեծ բաւականութիւն են ստանում, որ իրենց մարդասիրական գործը նպաստում է և Գերմանիայի պետական շահերին Արևելքում։ Եթէ իրօք Հիլֆսբունդ'ի հիմնարկութիւնները ծառայութիւն կը մատուցանեն Գերմանիայի շահերին, դրանից դեռ չի բղխում, որ այդ ծառայութիւնը մեզ պիտի վնաս լինի. և մենք տեսանք, որ այդ ճանապարհի վրայ Հիլֆսբունդը անկարող է գրեթէ մեզ վնաս բերել։ Ուրեմն, եթէ նա վերջ ի վերջոյ օգտաւէտ հանդիսանայ թէ գերմանացիներին, և թէ հայերին, այն ժամանակ ոչ միայն երկու կողմը պիտի շնորհակալ լինին, այլ և ամեն մի կողմնակի հանդիսատես պիտի ուրախ լինի, որ բարի գործը օգտաւէտ է լինում՝ ինչպէս ստացողին, այնպէս և տուողին։ Գոյանումն է կայանում կենսական առողջ իդեալը։

7/XI 1922

ՎԵՐՋ

Մեր տուած եզրակացութիւնները վերաբերւում են գործի այն ժամանակւայ դրութեանը, երբ գրել ենք նախորդ տողերը, այսինքն 1899—1900 թ., ուստի պատասխանատու չեն տպագրի համար։

Մի տարուց յետոյ արտատպելով այս յօդուածը, այժմ հարկաւոր ենք համարում անել հետևեալ ենթադրութիւնները այն թիւրիմացութիւնների առաջն առնելու համար, որոնք կարող են վերաբերիլ մեր հանած եզրակացութիւններին։

Ամեն մի գործ, քանի գնում է աւելի և աւելի է դառնում շահագործութեան առարկայ, չնայած որ այդ գործի

դրդիչ նպատակները յաճախ ամենաեսազուրկ և բարձր զգացմունքներն են եղել։ Շատ կարելի է, որ մեծ ազգութիւնների մէջ գոյութիւն ունեցող մրցումը Տաճկաստանում, որը արագ քայլերով աճում ու լարվում է, հետզհետէ կ'մղէ «Hilfsbund»-ը քաղաքական դեր խաղալու։ Ֆրանսիացիք իրենց չափազանց կոտրուած զգալով Գերմանիայի յաջողութիւններից Տաճկաստանում, արդէն կանչում են իրանց քաղաքագէտներին և միսսիոնարական ընկերութիւններին ուշադրութեանը։ Այն հանգամանքը, որ կաթոլիկութիւնը միշտ եղած է ֆրանսիական արտաքին քաղաքականութեան ամենաուժեղ միջոցներից մէկը և այն, որ բողոքականները, ատելով կաթոլիկութիւնը ու դարևոր կռիւ մղելով նորա դէմ, ամենայն միջոցներով ձգտում են փակել նորա տարածման ճանապարհները, կարող է դարձնել Hilfsbund-ի հայկական հիմնարկութիւնները կրօնական մրցման լոկ միջոց, ուստի հեշտութեամբ կարող են խախտել այն սկզբունքները, որոնցով նա մտադրութիւն ունէր ղեկավարելու իր գործունէութիւնը սկսելիս։